

Л. Г. Миславский


Одесский филиал Университета

Архивистике

Л - 1923

910.4

7-60



ՊԱՏԱՇՆԿԱՆ ԳՐԱԴՐՈՒՅ

13

ԲԱՐՁՐԱՎԱՆ ԱԵՐԻ

13

Ե. Կ. ՊԻՄԵՆՈՎԱ

ՈՂԱՊԱՐԻԿՈՎ  
ԴԵՊԻ  
ԳՐԵՆԼԱՍԴԻԱ

1927

910.4  
m-60

ԱՅՀՐԱՅ-ՅԵՐԵՎԱՆ

10 NOV 2011

21877

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 13

ԲՆԱԳԻՑԱԿՈՆ ՍԵՐԻՅ

№ 13

Ե. Կ. ՊԻՄԵՆՈՎԱ

910.4

Դ-60

Վ. Պ.

## ՈԴԱՊԱՐԻԿՈՎ

≡ Դ Ե Պ Ի ≡

ԳՐԵՆԼԱՆԴԻԱ

Յերկու սղայի արկածները հեռավոր հյուսիսում

Գ

Թուս. քարզ. Թուն. ԴՐԱՄԱՑԱՆ

Խմբ. Հ. ՊԵՏՐՈՎՅԱՆ



Հ. Ա. Խ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎՈ. 1927

Տպագրվում ե Հ. Ա. Խ. Հ. Սոցդասզիսվարչության կից գործող  
Մանկական Գրականության Հանձնաժողովի հավանությամբ:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«Մարս» ոդապարփկը.—Որհասական շարաններություն.—Ակամա  
ոգաչուներ.—Հեռավոր հյուսիսում.—Վորտե՞ղ ենք մենք.

Կոնսուլ Խոլմը հենց նոր եր գրասենյակից տուն վերա-  
դարձել: Նա շատ եր աշխատել և իրեն չափազանց հոգնած եր  
զգում, այդ պատճառով հաճութիւնը ձգվեց հարմար բազկա-  
թուի վրա և սկսեց աչքի անցկացնել իրիկվան լրագիրը, վոր  
բերել եր իր հետ: Սեղանատնից լսվում եր ափսեների և ա-  
մանեղենների շխչխկոցը: Ակներև եր, վոր Աննետան, նրա ծեր  
մորաքույրը, Հաջի համար սեղան եր պատրաստում: Սենյա-  
կում սկսեց մթնել: Խոլմը լրագիրը զրեց սեղանի վրա ու  
մոտեցավ պատռհանին: «Ի՞նչ արագ ոլանում են ամպերը յեր-  
կընքով, —մտածեց նա, —յերեխ՝ ուժեղ քամի յե բարձրացել»:

Իսկապես, ամբողջ յերկինքը ծածկվել եր ամպերով, և  
պատռհանից կարելի յեր տեսնել, թե ինչպես են ծովափում  
ծառերը ձկվում, և գեղնած տերենները պոկվում քամուց և մըդ-  
գում դեպի հեռուները: Ասես թե փոթորիկ եր սկսվում: Բայց  
չե վոր աշուն ե, և այդ զարմանալի չե: Յերանի այն մար-  
դուն, վոր այս յեղանակին նստած ե տաք սենյակում և չի  
նկատում քամու կատաղի թափը:

Խոլմը լուսամուտից հեռացավ և բաց արագ սեղանատան  
դուռը:

— Աննետան, կինս վերադարձել ե, — հարցը եց նա:

— Դեռ վհչ, — պատասխանեց պառավը, — նա յերկու տը-  
ղաների հետ ժամի չորսին ե գնացել: Երիկն ու Խելգեն ու-  
զում եյին անպայման տեսնել «Մարս» ոդապարփիկի թոփչը:

— Ա՛խ, հա, — ասաց Խոլմը. — Մոռացել եյի: Այսոր ե նը-

շանակված «Մարս»-ի թոփչքը: Հավանաբար, լրագրում ազդ կա տպված: Ահա:

Նա կրկին առավ լրագիրը և կարդաց, թե ինչ որ, և ժամի քանիսին ե տեղի ունենալու ողապարիկի թոփչքը: Հետո գալիս եր նրա կազմության նկարագրությունը: «Մարս»-ը բարձրանալու մեծ ուժ պիտի ունենար: Նրա մեծության մասին կարելի յեր գաղափար կազմել նրա նավակից, ուր սովորական պայմաններում տասը մարդ կարող ելին տեղափորվել: Առաջին անգամ այդ հսկայական գնդով չորս մարդ են բարձրանալու, բայց մնացած վեց մարդու պակասող կշիռը փոխարինվում ե ամեն տեսակի պաշարեղենով և զանազան իրերով, վորոնք անհրաժեշտ են այդպիսի ճանապարհորդության համար:

Ճանազան ուտելեղենների, կոնսերվանների և այլն ապրանքների քանակը հաշված ե մեկ շաբաթվա համար: Բայցի այդ նավակում կան պահեստի մորթե զգեստներ և քնելու համար հրաշալի մեջոկ, ուր կարող են տեղափորվել յերկու մարդ: Այդ թոփչքի նպատակն ե — պարզել, թե այդպիս ծանրաբեռնված մի ողապարիկ, վմբռան ժամանակ կարող ե, առանց իջնելու, մնալ ողում և ինչ հեռավորությամբ կթոշի:

Հսկայական գունդը, վոր սկսեցին գիշերը գագով լցնել վաղ առավոտյանից արդեն աների տանիքներից ու ծառերից վեր եր բարձրացել: Այսոր տեղի յե ունենալու թոփչքը, ժամը...:

Սոսկալի քամու հոսանքն անձրեի հետ ուժգնորեն խփեց լուսամուտի ապակուն, այնպես, վոր փեղկերը ցնցվեցին: Խոլմը ընթերցանությունն ընդհատեց: Ի հարկե, այս յեղանակին ողապարիկը բարձրանալ չի կարող: Բային փչում ե մըրիկի նման:

Այդ ըոպեյին դանգը հնչեց:

— Ահա կինս ու յերեխաները, -- ուրախ գոչեց Խոլմը և գնաց մուտքի դուռը բանալու:

Իսկապես, նախադրան առաջ կանգնած եր կինը: Բայց նա միայնակ եր և կատարելապես ուժասպառ, կպել եր դռան շրջանակին և ամբողջ մարմնով հեկեկանքից ցնցվում եր: Վախեցած Խոլմը նրան սենյակ տարափ, վորովհետեւ նա հաղիվ եր

կանգնում վոտքի վրա: Բայց յերկար ժամանակ չկարողացավ նրա բերնից մի խոսք բաշել: Հեկելանքները չեյին թողնում վոր խոսի: Պարզ եր, վոր սարսափելի մի բան եր պատահել: Խոլմը նրա ընդհատվող խոսքերից կարողացավ միայն այն հասկանալ, վոր յուր վորդիները յենթարկվում են սոսկալի վտասդի, և գուցե... վոչնչացել են:

Հաջորդ առավոտ թերթերում տպված եր, թե նախորդ որը ինչ ե տեղի ունեցել այն հրապարակում, վորտեղից, ողային ձանապարհորդության համար պատրաստ «Մարս»-ը ցույց եր տրվում: Քամու ուժեղանալու հետևանքով, վոր սաստիկ մըրբիկի կերպարանը եր ընդունել, թոփչքը տեղի չեր ունեցել: Այս բանը կոնսուլի կնոջը հայտնեց իր ամուսնու: յեղբայր ոդաչու Խոլմը, վորը յերկու ոգնականներով և մի մեքենավարով թոփչք պիտի գործեր այս ողապարիկով: Այն ժամանակ, յերբ կոնսուլի կինը խոսում եր իր տաքեր հետ, նրա տղերը չոփազանց հետաքրքրված ողապարիկով, գնացին այն դիտելու: Վորովհետև շատ շուտ մինել սկսեց, ուստի վոչ վոք նըրկատեց, վոր յերեխաները ողապարիկի նավակն են մտել: Անշուշտ, նոցա մտքով վտանգ չեր անցնում և նոքա ուզում ելին իրենց մոր և հորեղբոր հետ կատակ անել և հարկադրել նրանց՝ վինտաել իրենց: Հասկանալի յե, վոր սովորական պայմաններում, վոչինչ չեր պատահի: Բայց, յերբ զինվորներն ողապարիկը պահող կապերն արձակեցին, վորպեսզի այն քաշեն ծածկոցի տակ, այդ միջոցին, հանկարծակի վրա հասնող մըրբիկը պոկեց պարաները նրանց ձեռքից, և բաց թողնված «Մարս»-ը աբագորեն դեպի վեր թռափ: Յերեխաները վախեցած աղաղակներով միայն այդ ըոպեյին իմաց արին, վոր իրենք նավակում են գտնվում: Բայց ողապարիկը պահել անհընարին եր, և մի քանի ըոպե հետո, ամպերի մեջ հազիվ նկատելի յեր մի մութ կետ, վորն անհավատալի արագությամբ մըղվում եր դեպի հեռուն և շուտով, տեսողությունից միանգամայն անհայտացավ: Ի միջի այլոց, վրա հասնող ամպերն ու մթությունը խանգարում էլին վորեւ բան դիտել:

Դժվար ե նկարագրել այդ յերկու յերեխաների ծնողների

հուսահատությունը, յերեխաների, վորոնք ակամա ողաշուներ դարձան։ Մըրիկը շարունակում եր մոլեգնել և ով գիտե, թե ողապարիկը վնաբան ժամանակ կարող ե պահել իր բարձրանալու ուժը։ Ակներև ե, ողապարիկը շատ բարձրացավ, այդ պատճառով անհնար յեղավ վորոշել, թե ուր ե քշում նրան քամին։ Տղաներն ել բոլորովին չգիտեյին, թե ինչպես պիտի վարել ողապարիկը, և այս պատճառով յերկուողը լուրջ եր։ Փոթորիկն ողապարիկը ծովի կողմը քշեց և ով գիտե, թե ինչ վիճակ ե սպասում ակամա ողաշուներին։ Ողապարիկը ծովն ընկնելու դեպքում, նոքա կարող են խեղդվել, կամ կարող են խեղդամահ լինել բարձունքում, ուր ողը հետզհետե նոսրանում ե և թթվածնի պակասության պատճառով, վոր շնչառության համար այնքան անհրաժեշտ ե, շնչառությունն ավելի ու ավելի դժվարանում ե։ Այսպես թե այնպես, վոչ վոք հույս չուներ, թե տղաները կարող են ազատվել։ Զնայելով, վոր ամեն տեղ, վոչ միայն հյուսիսային Յեվրոպայում, այլ և Ամերիկայում հայտնեցին այս դեպքի մասին և ամենուրեք նայում ու փընտում ելին ընկած ողապարիկի վորեւ հետք, բայց վոչ մի տեղ վոչինչ չգտան, և վոչ մի նավ չտեսավ նրան ծովի վրա։ «Մարս»-ի մասին վոչ մի տեղեկություն չստացվեց, և այս տխուր պատճարը կամաց-կամաց մոռացան։ Չմոռացան միայն անբախտ ծնողսերը, չդադարելով վողբալ իրենց խեղճ յերեխաներին, վորոնց բախտն անհայտ մնաց……

Սակայն «Մարս»-ը չոչնչացավ, ինչպես մտածում ելին շատերը։ Ողապարիկն իջավ հեռավոր հյուսիսում, բնեռային շըշմում, ինչ վոր ամացի ափ։

Երիկն ու Խելգեն վող և առողջ դուրս յեկան ողապարիկի կողովի միջից և սկսեցին դիտել։ Նրանք մոտակայքում մի բարձր, լերկ ժայռ տեսան, և Երիկը վճռեց բարձրանալ նրա գագաթը, վորպեսզի այնտեղից դիտի շրջապատը և հնարավորության չափով իմանա, թե ուր են ընկել իրենք։ Նրա փոքրը յեղբայր Խելգեն, գանգատվելով հոգնածությունից, հրաժարվեց նրա հետ գնալ։ Նա լալիս եր, և Երիկը վոչ մի կերպ չկարողացավ միիթարել ու հանգստացնել նրան։

Բայց Երիկը, չնայելով յուր հասակին—նա զեռ տասն-հինգ տարեկան եր—ոժտված եր տղամարդու բնավորությամբ և ուժեղ կամքով։ Նա հիշեց իր հոր խոսքերը, թե հոգեպես իերեք չպիտի ընկճվել։ Կամքի ուժով և յեռանդով մարդ կառող ե շատ բանի հասնել և ամենադժվարին հանգամանքների միջից հաղթական յենել։ Իրենց թեթևամտության և անմտության պատճառով շատ դժվար, գուցե և վտանգավոր դրության ընկան և այժմ, ինչպես մեծ յեղբայր, նա պիտի հոգար յուր և Խելգեյի ազատության մասին։

Բայց ամենից առաջ հարկավոր եր պարզել, թե ուր են գտնվում իրենք։ Վերքան են հեռացել իրենց հայրենիքից՝ Դասիայից։

Երիկը մեծ դժվարությամբ բարձրացավ զառիվեր ժայռը։ Նրա գագաթից հնարավոր եր չորս կողմը գննել։ Ողը բուրեցի պես մաքուր եր, և այդ պատճառով նա կարողացավ ամեն բան պարզ տեսնել։

Նա տեսավ՝ մեծ ու փոքր ժայռեր, ծովածոցեր, ծուռումուր խորշեր, վորոնք խորը կերպով մանում ելին ափի մեջ, հեռվում, յերկրի խորքերում, տեսավ բարձր լեռներ ձյունապատ կատարներով և սառցարաններով, վորոնք իջնում ելին մինչև ծովը, ուր նրա մակերեսութիւն վրա լողում ելին մեծ սառցաշերտեր ու սառցասարեր, թեպետև դեռ նոր սեպտեմբեր ամիսն եր և հետևապես ձմեռը դեռ չեր յեկել։ Երիկը վոչ մի տեղ մարդկային բնակության և վոչ մի հետք չնկատեց. վոչ մի տեղ մարդ կամ տուն չեր յերկում, և վոչ ել կապույտ ծուխ արձակող ծինելույզներ։ Չելին յերեսում վոչ դաշտեր, վոչ մարդագետիներ, վոչ վորեւ ընտանի կենդանի, վոչ զյուղ, վոչ ծաղիկ կամ կանաչ։ Չորս կողմը ամայություն եր։ Ի զուր Երիկը նայում եր հեռուն, հուսալով այնտեղ կյանքի վորեւ նըշույլ տեսնել։ Վոչ, այդ յերկիրը մեռած յերկիր եր։ Ողում վոչ մի թոշուն չեր թոշում և վոչ մի բան չեր խանգարում այդ տարորինակ, հոգեմաշ հանգստացներունը, վոր թագավորում եր չորս կողմը։

և պատրաստելու համար։ Հանկարծ Երիկը արծաթապատ փայտով, ձանապարհորդական մեծ պայուսակ տեսավ, վորի վրա փորագրված եր Խոլմի ազգանունը։

— Հորեղբորս պայուսակն ե այս, —ուրախ գոչեց նա։

Նա գրչահատով փականքը ջարդեց։ Պայուսակում գործիքներ, քարտեզներ, ե ինչ վոր արդ ու զարդի առարկաներ կային. բայց հաց, կտոր-կտոր արած խոզի ապուխտ և յուղ եր գտնվեց։ Հացը քարի պես կոշտ եր, իսկ յուղը սառել եր։ Բայց տղաներն ամուր ատամներ ունեյին. բացի այդ նոքա սոսկալի քաղցած եյին։

Սակայն, արել դեռ ևս մայր չեր մտնում, և որը շարունակվում եր։

— Յես չեմ հասկանում, այս ի՞նչ ե նշանակում, — ասաց Երիկը, — Ա՛յս, մենք ժամացուց վոր ունենայինք։

— Հա, մենք վոր ժամացուց ունենայինք, հորեղբոր ժամացուցի պես, վոր ամբողջ շաբաթ եր բանում և ցուց եր տալիս որերն ու ժամերը, — ավելացը եց Խելգեն։

— Հորեղբոր խրոնութեարը. — բացագանչեց Երիկը. Անկարելի յե, վոր իր հետ վերցրած չլիներ։ Մեկ ել քրքրենք պայուսակը։

Իրոք, ժամացուցը պայուսակումն եր, Խելգեն գտավ։

— Տուր՝ տեսնեմ, տուր՝ տեսնեմ, — գոչեց Երիկը անհամբերությամբ դոդալով։ Ի՞նչ որ ե այսոր։

— Մեպտեմբերի 25-ը։

— Իսկ մենք ողապարիկով բարձրացանք 22-ին։ Ուրեմն մենք յերեք որ ձանապարհ ենք յեկել։ Հիմա յեմ հասկանում, թե ինչու փորներս վեց վեց ե անում։ Ժամի քանիսն ե հիմա։

— Ժամի տասներկուսն ե, — պատասխանեց Խելգեն։

— Ի՞նչպես, միթե այժմս կեսոր ե։

— Վոչ, Երիկ, լավ ե՝ ինքդ առնես ու նայես։

Յեկ Խելգեն ժամացուցը մեկնեց յեղբորը։

— Կես գիշեր ե, — գոչեց Երիկը, — Յեկ դեռևս լույս ե։ Արեն ել մայր չի մտել։

— Կես գիշերային արև ե, — կամացուկ շնչաց Խելգեն։

Հանկարծ Երիկը լուեց։ Նա նայեց չորս կողմ, տեսավ ծովի մեջ լողացող սառուցները, լեռներից իջնող սառցասարերը և ձյունը, վոր չեր հալել և դեռ սեպտեմբերին նստած եր։ Պարզ եր, վոր այնտեղ ձյունը յերբեք ամբողջովին չի հալչի։

— Յերթանք Խելգե, — դարձավ նա յեղբորը, — բանի վոր կես գիշեր ե, ժամանակ ե պառկել քնել և հանգստանալ. . . վորպեսզի ուժ ստանանք։ Մեր ուժերը դեռ մեզ պետք կդան, — ավելացրեց նա կամացուկ ձայնով։

Տղաները յերկուսով մտան քնելու մեշոկը և վերևից ծածկեցին։ Մեշոկում տաք եր ու սիրուն։ Երիկը բռնեց յեղբոր ձեռքն ու սեղմեց։

— Խելգե, — ասաց նա քնքշաբար, — չհուսահատվես, յես հիմա գիտեմ, թե ուր ենք գտնվում։

— Երիկ. միթե կարծում ես, վոր յես վաղուց գլխի չեմ ընկել այդ։ Զե վոր յես աշխարհագրություն իմ սովորել։ Յես գիտեմ, վոր կես գիշերային արև նորվեգիայում ե լինում։

— Նորվեգիայում. . . ։ Խելգե. . . ։ Վոչ մեզ վիճակված չեր այդքան լավ յերկիր ընկնել։ Քեզ կասեմ, թե մենք վորտեղ ենք գտնվում, մենք Գրենլանդիայում ենք։

Խելգեն վերջապես հասկացավ. Գրենլանդիա, — չե վոր այդ հեռավոր յերկիր ե, ուր ամբողջ տարվա ընթացքում լինում ե շատ յերկարատև ցերեկ և մի յերկար ձմեռային գիշեր։ Յեվ Գրենլանդիայում, ձյուների տակ վնրքան խիզախ ճանապարհունքներ են թաղված. . .

Խելգեն դառն լաց յեղավ։ Բայց Երիկը գրկեց նրան և պկսեց միսիթարել։

— Լաց մի լինիր, — ասաց նա, — տղամարդ լինենք։ Ժամակին մենք կպարծենանք, վոր այսքան փորձանքներ ենք կը բերել։ Յես հավատացած եմ, վոր, ի՞նչպես ել լինի, դժվարություններից դուրս կդանք։ Մի մոռանար, վոր Գրենլանդիայում դանիական վերաբնակություններ կան. . . ։ Խելգեն կամաց կամաց հանգստացավ ու քնեց։ Բայց Երիկը յերկար ժամանակ չեր քնուել և մտածում եր. . .

Ի՞նչ ահագին պատասխանատվություն ե ընկնում ինձ վր-

և պատրաստել ուտելու համար: Հանկարծ Երիկը արծաթապատ փայտով, ձանապարհորդական մեծ պալուսակ տեսավ, վորի վրա փորագրված եր Խոլմի ազգանունը:

— Հորեղբորս պայուսակն ե այս, —ուրախ գոչեց նա:

Նա գրչահատով փականքը ջարդեց: Պայուսակում գործիքներ, քարտեզներ, ե ինչ վոր արդ ու զարդի առարկաներ կային. բայց հաց, կառուկտոր արած խոզի ապուխտ և յուղ ել գտնվեց: Հացը քարի պես կոշտ եր, իսկ յուղը սառել եր: Բայց տղաներն ամուր ատամներ ունեյին. բացի այդ նոքա սոսկալի քաղցած եյին:

Սակայն, արել դեռ ևս մայր չեր մտնում, և որը շարունակվում եր:

— Յես չեմ հասկանում, այս ի՞նչ ե նշանակում, —ասաց Երիկը, —Ախ, մենք ժամացույց վոր ունենայինք:

— Հա, մենք վոր ժամացույց ունենայինք, հորեղբոր ժամացույցի պես, վոր ամբողջ շաբաթ եր բանում և ցույց եր տալիս որերն ու ժամերը, —ավելացրեց Խելգեն:

— Հորեղբոր խրոնումետրը. —բացագանչեց Երիկը: Անկարելի յե, վոր իր հետ վերցրած չլիներ: Մեկ ել բրքենք պայուսակը:

Իրոք, ժամացույցը պայուսակումն եր, Խելգեն գտավ:

— Տուր՝ տեսնեմ, տուր՝ տեսնեմ, —գոչեց Երիկը անհամբերությամբ դողալով: Ի՞նչ որ ե այսոր:

— Մեպտեմբերի 25-ը:

— Իսկ մենք ողապարիկով բարձրացանք 22-ին: Ուրիշն մենք յերեք որ ճանապարհ ենք յեկել: Հիմա յեմ հասկանում, թե ինչու փորներս վեց վեց ե անում: Ժամի բանիսն ե հիմա:

— Ժամի տասներկուսն ե, —պատասխանեց Խելգեն:

— Ի՞նչպես, միթե այժմս կեսոր ե:

— Վոչ, Երիկ, լավ ե՝ ինքդ առնես ու նայես...:

Յեվ Խելգեն ժամացույցը մեկնեց յեղբորը:

— Կես գիշեր ե, —գոչեց Երիկը, —Յեվ դեռևս լույս ե:

Արևն ել մայր չի մտել:

— Կես գիշերային արև ե, —կամացուկ շանջաց Խելգեն:

Հանկարծ Երիկը լուեց: Նա նայեց չորս կողմ, տեսավ ծովի մեջ լողացող սառուցները, լեռներից իջող սառցասարերը և ձյունը, վոր չեր հալել և դեռ սեպտեմբերին նստած եր,... Պարզ եր, վոր այնտեղ ձյունը յերեք ամբողջովին չի հալչի...:

— Յերթանք Խելգե, —դարձավ նա յեղբորը, —քանի վոր կես գիշեր ե, ժամանակ ե պառկել, քնել և հանգստանալ... վոր կես գիշեր յել ժամանակը: Մեր ուժերը դեռ մեղ պետք կգան, —ավելացրեց նա կամացուկ ձայնով:

Տղաները յերկուսով մտան քնելու մեջոկը և վերեկից ծածկեցին: Մեշոկում տաք եր ու սիրուն: Երիկը բռնեց յեղբոր ձեռքն ու սեղմեց:

— Խելգե, —ասաց նա քնքշաբար, —չհուսահատվես, յես հիմա գիտեմ, թե ուր ենք գտնվում:

— Երիկ. միթե կարծում ես, վոր յես վաղուց գլխի չեմ ընկել այդ: Զե վոր յես աշխարհագրություն իմ սովորել: Յես գիտեմ, վոր կես գիշերային արև նորվեգիայում ե լինում...:

— Նորվեգիայում...: Խելգե...: Վոչ մեղ վիճակված չեր այլքան լավ յերկիր ընկնել: Քեզ կասեմ, թե մենք վորտեղ ենք գտնվում, մենք Գրենլանդիայում ենք:

Խելգեն վերջապես հասկացավ. Գրենլանդիա, —չե վոր այդ հեռավոր յերկիր ե, ուր ամբողջ տարվա ընթացքում լինում ե շատ յերկարատև ցերեկ և մի յերկար ձմեռային գիշեր: Յեվ շատ հորդների տակ վնրքան խիզախ ճանապարհում են թաղված...:

Խելգեն դառն լաց յեղավ: Բայց Երիկը գրկեց նրան և սկսեց միխթարել.

— Լաց մի լինիր, —ասաց նա, —տղամարդ լինենք: Ժամանակին մենք կապարձենանք, վոր այսքան փորձանքներ ենք կը ըստել: Յես հավատացած եմ, վոր, ինչպես ել լինի, դժվարություններից դուրս կգանք: Մի մոռանար, վոր Գրենլանդիայուններից կգանք: Մոռանար, վոր Գրենլանդիայունների կան...: Խելգեն կամաց դանիական վերաբնակություններ կան...: Խելգեն կամաց նակամարդ չեր քնութ և մտածում եր...:

Ի՞նչ անագին պատասխանատվություն ե ընկնում ինձ վոր:

ըա: Հետեւալ առավոտ նոքա թարմացած և առուցգ վեր կացան, ու վորոշեցին, ամենից առաջ իրենց բնակարանը կարգի բերել:

— Ահա այստեղ լավ ե, — ասաց Երիկը կանգ առնելով մի մեծ քարի մոտ, վոր ժայռից պոկիել ու գլորվել եր ներքեան հովտի խորքերը:

Քարի այդ զանգվածը կպաշտպանի մեզ ծովալին փոթորիկներից: Այժմ մեզ միայն տուն ե պակասում: Բայց մենք ունենք ողապարիկի կտորները. Նրանցով վրան կը շինենք: Բայց վհրատեղից սյուներ գտնենք:

— Սյուները ի՞նչներիս են պետք, — հանդարտ նկատեց Խելգեն: Չե վոր մենք զամբյուղ ունենք:

— Այս ճիշտ վոր, զամբյուղ... հրճվեց Երիկը: Ի՞նչ լավ միտք:

Այս արկածը նույնիսկ սկսում ե հաճելի դառնալ իրեն: Վորպիսի սնունդ ե մատակարարում այն իր հնարագիտության: Բայց նա դեռ ծանոթ չե բնեռային ձմռան վառնուներին:

Ողապարիկի ահոելի զամբյուղը, վոր ի նկատի յեր առնված տասը մարդու համար, անշուշտ յերկու տղաների համար բավական ընդարձակ եր, և նրանք տաք-տաք գործի կպան:

Նախ հարկավոր եր կողովը դատարկել, գուրս հանելով նրա միջի իրերը, հավաքել ու թագցնել: Մի քանի ամիս գուշե իրենց գոյությունը դրանից կախված լիներ:

Նրանց դեմքից, յերբ զբաղված եյին զամբյուղով, ըրրտինքն առվի պես հոսում եր: Նրանք կողովը շուռ տվին կողքի վրա և դեմ տվին ժայռին, արդպիսով տանիք ու պատեր կազմվեցին: Բնակարանը դրսից ու ներսից պատեցին ողապարիկի անթափանցելի կտորով և մեծ քարերի ոգնությամբ ամրացրին: Հետազայում, յերբ ձյուն գար, իրենց տնակը կծածկեր ձյան փափուկ շերտով, և նրանք մուտքի մոտ, ձյան մեջ, տուննելի պես բան կշնեն, ինչպես նրանք այդ տեսել եյին եսկիմոսների բնակարանների նկարներում:

Տնակը տաք ե ու լավ. նրանք շատ գոհ են: Հարթ քարը ծառայում ե նրանց ինչպես թախտ: Նրա վրա մի քանի ծալ

մետաքսյա կտորներ փոեցին և փափուկ ու սիրուն պառկում են այստեղ: Աշխատանքից հետո հրաշալի հանգստանում են ըլնելու պարկում: Բնակարանի մնացած ազատ տարածությունը բռնված ե կողովում գտած իրերով և ուտելեղեններով:

Երիկն ուտելեղենների մանրամասն ցուցակ կազմեց և թեթևած սրտով նկատեց, վոր իրենք առնվազն մի քանի ամիս պաշարով ապահովված են: Իսկապես զարմանալի յեր, ինչքան բաներ կալին արկում: Այստեղ քսան մարդ կերակրելու հաշվով՝ թխվածքներ, յուղ, պանիր, խոզի ապուխտ, սուրճ և կոնսերվա կար: Այս կարող եր բավականացնել տղաներին առնվազն յերկու, նույնիսկ մինչև յերեք ամիս: Իսկ յեթե իրենք այս պաշարը ձկներով ու վորսերով լրացնեն, այդ գեպւում, ուրեմն, այն յերկար ժամանակ հերիք կանի: Բացի ուտելեղեններից, նոքա այլ առարկաներ ել գտան, — նավթի պրիմուս, յերկու թիթեղյա տուփ նավթ, ամեն մեկը 10 լիտր նավթով, զինվորական հրացան՝ յուր փամփուշտներով, վորսորդական հրացան, ատրճանակ՝ հիսուն փամփուշտով, յենթասպալի սվին, կացին և մի քանի զանազան տեսակի գործիքներ, և միջի ալլոց, ջերմաչափ, լուսանկարչական ապարատ, յերկու հեռաղիտակ, մի քանի քարտեզ, թուղթ և գրենական պիտույքներ:

Հագուստեղենից կային չորս մուշտակ և հորեղբոր Խոլմի փոքրիկ պայտասակը:

— Դե, հիմա սուրճ խմենք, — ասաց Երիկը, իրերը դասավորելը վերջացնելով:

Որվա վերջին մասը նոքա անց ելին կացնում քնելու պարկում, բայց նախքան ընելը, նոքա յերկար խորհրդակցում ելին, թե ինչպես ծովանորթ սպանեն:

Յեթե այդ մեզ հաջողվի, մենք լուսավորության համար ծովանորթի ճարպ կունենանք և խոհանոցի համար՝ վառելիք, արդպիսով նավթը կարող ենք տնտեսել: Հուսանք, վոր ամեն բան լավ կանցնի, — բացագանչեց Երիկը:

Բայց Խելգեն Երիկի ուրախալից հույսերին մասնակից չեր: — Այդ լավ, — համաձայնվեց Խելգեն, — բայց... յեթե նույն.

իսկ մեկ հատ փամփուշտ ի զուր չկորչի, յեթե ամեն անգամ մենք մեկական ծովահորթ սպանենք, այնուամենայնիվ, ժամանակ կգա, յերբ մեր փամփուշտները կսպառվեն։ Իսկ յերբ մաշվեն մեր հագուստները։ Կամ մեզ վրա արջեր հարձակվեն։ Կամ յերբեք, յերբեք այստեղից դուրս չգննք...

— Այո, իրավացի յես, — պատասխանեց Երիկը, — կամ յեթե մեզ վրա սարերը փուլ գան... կամ յեթե պարզվի, վոր մենք հրաբուխի վրա յենք գտնվում։ Բայց գիտե՞ս՝ ամենից վատը վորն ե, Խելգե։

— Վո՞չ, — պատասխանեց Խելգեն։

— Ասենից գատն այն կլինի, յեթե մենք հուսահատվենք... և վախից մեռնենք։

Խելգեն հուզված լոեց։

— Գիտե՞ս ինչ, Խելգե, — հանկարծ ասաց Երիկը, — մենք մեր այս տիրապետության համար դեռ անուն չենք գտել։ Այս տեղն անվանենք «Հուզի Հովիտ»։

—

## ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

Պ. 6 հաշող գորսորդուրյուն. — Ռեվեռային ձմռան սարսափերը. — Գորսորդուրյուն. — Ծովացուկեր. — Ծովացուկի աչքը. — Ծանր աշխատանք. — Զնենամուտը. — Մրրիկներ. — Ռեվեռային գիշեր. — Ցերեկ ամբար. — Մոր ծեճողան որը.

Երիկը վճռեց յուր բաղդը փորձել և ծովահորթեր վորսալ։ Բայց զուր, սկզբում շատ անհաջող անցավ։ Նա անտեղի տասնյերկու փամփուշտ փչացրեց, և վոչ մի ծովահորթ չխըֆելով վշտացած տուն վերադարձավ։

Նրա զլիսով տխուր մտքեր անցան։ Յեթե ծովահորթի ճարպ չունենան, այդ գեպքում նավթի պաշարը բևեռային յերկար ձմեռվան համար չի հերիքի։ Ի՞նչ կլինի այն դեպքում, յերբ պրծնի։ Երիկը գիտեր, վոր բևեռային շրջաններում, հեռավոր հյուսիսում շատ շաբաթների ընթացքում ձմռանը արև չի յերևում։ Հեռավոր հյուսիսում, այնտեղ, վորտեղից անվե-

հեր ճանապարհորդ Պիրին դեպի հյուսիսային բևեռ ուղեարկեց, ձմռան գիշերը տեսում ե մինչև չորս ամիս, իսկ ամենահյուսիսում՝ դանիական գաղութ Ուպերնավիկում՝ յերեք ամիս։ Յեվ ամեն բան, ամեն ինչ ձմռանը բևեռային շրջաններում սառչում ե։ Ծովահորթերը, ծովացուկերը, թոշունները և բոլոր կենդանի արարածները, վորոնք ամառը և աշնանը սառուցների մեջ բնակություն են հաստատում, այդ ժամանակ հեռանում են։ Յեվ եսկիմոսները ձմեռն իրենց հավաքած պաշարով են ապրում։ Վայ նրան, ով բևեռային ձմռան չափով բավականաչափ պաշար չի հավաքել։ Դժբախտություն ե, յերբ ձմեռը սովորականից ավելի յե յերկարում, և սառուցն ուշ ե շարժվում։ Յեթե ամբողջ պաշարը վերջանում ե, այդ գեպքում սովամահորթյուն ե պատահում։ Բայց լավ տարիներում եսկիմոսի համար դժվար չե ծովահորթերի մսից բավականաչափ պաշար պատրաստելլ։ Այսպիսի ցրտերի մեջ պաշարը չի փշանում, իսկ վորպեսզի արջերը չքաշեն այն, եսկիմոսը նրա վրա մեծ և ծանր քարեր ե գարսում։ Չմռան յուր գոյությունը ապահովելով՝ նա հանգիստ քնում ե, և բևեռային գիշերը նրա համար աննկատ ե անցնում։ Նա յերբեմն-յերբեմն միայն դուրս ե սողում խրճիթից, և շներ լծած սահնակներով զբոնում, հարևաններից մեկն ու մեկին այցելելու նպատակով։ Երիկը վերհիշեց այն բոլորը, ինչ վոր եսկիմոսների մասին կարդացել եր ու գիտեր։ Չե վոր եսկիմոսները տեղափորվել և ապրում են այս բևեռային ամայության մեջ։ Բայց ի՞նչ կպատահի իրեն և յուր յեղբօրը։ Նա զգաց, վոր իր հոգում հուսահատությունն ե սողոսկում։

Խելգեն նրան եր սպասում. նա համեղ ճաշ եր պատրաստել, սիսեռյա կոլբաս ու թխվածք, սակայն, այս հյուրասիրության տեսարանն անգամ Երիկի տխուր մտքերը չցրվեց։ Ամեն մի պատառի հետ նա մտածում եր, թե ի՞նչ կպատահի, յերբ պաշարը վերջանա։ Վո՞չ, ինչ գնով ել լինի, նոքա ծովահորթ պիտի սպանեն և այս ել մի քանիսը։ Յեվ ամեն մի տուփ կոնսերվա բանալիս՝ Երիկի սիրտը վախից ճմլվում եր։ Ի՞նչ ե լինելու, յերբ բաց կանեն ամենավերջին տուփը։

Այսպիսի տխուր մտքերով տարված՝ իր անհաջող վորսորդությունից տուն վերադարձավ. նա կամաց յերգում եր. իրեն հոգնած զգալով, վճռեց պառկել բնելու մեշոկը, վորպեսզի հանգստանա և սկսեց փռել մեշոկը. Այդ միջոցին Խելգեն ձյուն հավաքելու և հալեցնելու համար բնակարանից դուրս յեկավ, վորովհետև ջուր չունեցին: Բայց հազիվ եր նա գլուխը դուրս հանել, յերբ անմիջապես գոչեց.

— Երիկ, Երիկ, շուտ, շուտ այստեղ յեկ:

Երիկն անմիջապես դուրս թռավ և նրա աչքի առաջ բացվեց վաղուց ի վեր ցանկացած տեսարանը: Այի մոտ մի քանի ծովացուլեր սառցի վրա ելին դուրս յեկել և այստեղ, կեսգիշերացին արեի

ձառագայթների տակ, հանգստանում ելին:

— Սպասիր այտեղ, Խելգեն, — գոչեց Երիկը, արագությամբ վերցրեց հրացանը և մի քանի փամփուշտներ դնելով զրպանը, վազեց: Մինչև ափ վազելով, նա ձյան կուտի յետեղում թագնվեց և սկսեց դիտել ծովացուլերին: Վեց ահազին կենդանիներ սառցի վրա պառկած ելին: Քանի հազար փութմիս ու ճարպ կլինելին նրանք — մտածեց նա:

Նա արդեն պատրաստվել եր հրացանը կրակել, յերբ բարերախտաբար, հիշեց, վոր ինչ վոր տեղ ինքը կարդացել ե ծովացուլերի վորսի մասին: Գնդակը պիտի ե ուղղել ծովացուկի ճիշտ գլխին, հակառակ դեպքում՝ նրան սպանել չի կարելի: Հետևապես այնպես պետք եր մոտենալ ծովացուլերին, վոր նոցա նահանջի ճանապարհ փակվի: Երիկը սառցի վրայով քայլեց և նախքան ծովացուլերին մոտենալը, մեծ շըջապտույտ կատարեց: Ի միջի այլոց, նրանց մոտենալը դժվար էր, վորովհետև անձոռնի, ծույզ կենդանիները նույնիսկ գլուխ ները շուռ չտվեցին նրա կողմը:



Կ. 1.

Նա հրացանն արձակեց և սպանեց յերկսին, հետո պատրաստվում եր խփել յերրորդին, յերբ հանկարծակի նայեց ծովացուկի աչքերին: Ի՞նչ զարմանալի աչքեր ուներ նա: Յեկ երիկը չկարողացավ կրակել: Հանկարծ նրա մեջ մի կրքոտ ցանկություն առաջացավ — հրացանը շպրտել և փախչել, վորքան կարելի յե, հեռուն, դեպի Դանիա, մոր մոտ, փարվել նրան և լաց լինել, անվերջ լաց լինել....

Բայց դաժան իրականությունը հարկադրեց աղային ինը իրեն զսպել: Խելգեն նրա թուլությունը չպիտի տեսներ: Նա հիշեց, վոր իրենց կյանքն այս ավարից եր կախված, և դրանից պետք ե ոգտվելին:

Յեկ ահա խեղճ տղաներն սկսեցին ծանը աշխատանքը: Մասի այդ ահազին լեռները հարկավոր եր կտոր-կտոր անել, քերթել կաշին և ճարպն առանձնացնել: Այս ահազին աշխատանք եր: Կացինն ու սվինը գործածության մեջ մտան, և վերջապես նրանց հաջողվեց այս գործը գլուխ բերել և իրենց մառանը մսով ու ճարպով լցնել: Բայց ի՞նչ տեսք ունելին նոքա այդ բանից հետո: Վոտքից մինչև գլուխ կեղտոտվել ելին, ճարպ և արյուն գարձել: Իսկ նրանցից զզվելի հոտ եր փշում:

— Թո՛ւ, ինչ զզվելի յե, — ասաց Խելգեն, լավ ե, վոր վերջապես հաղթահարեցինք այս սոսկալի աշխատանքը:

Բայց Երիկը տարված ե: Նա անընդհատ հիշում և ծովացուլի հայացքը և զզում, վոր ինքը վոչ վորսորդ կարող ե լինել և վոչ ել՝ մսագործ:

— Բայց չե՞ վոր այդ անհրաժեշտ եր, — նկատեց խոհուն Խելգեն:

Այս, այդ ճիշտ եր: Առանց այդ պաշարի նոցա քաղց եր սպառնում: Այժմ թող ձմեռը գա: Նոցա ուտելիքը կհերթիքի:

Որեը հետզինետե կարճանում են: Կեսորին միայն լույս ե լինում և, ընդհանրապես, արել շատ քիչ և բարձրանում հորիզոնի վրա: «Հույսի հովտում» աշնանալին փոթորիկներն արդեն զզալի յեն: Մարերից կամ ծովից սառցալին քամին վոռնոցով թոշում ե այստեղ, ուր նոր սառույցն ե կազմվում: Յեկ ի՞նչ տարբերություն իրենց հայրենիքի և այստեղի մըր-

Երկների մեջ։ Նույն իսկ Դանիալի ծովագերի ալևմայան, ամենառուժզին քամիները չեն կարող համեմատվել այն մրբիկների հետ, վորոնք այժմ վոռնում են իրենց չորս կողմը։ Լավ եր, վոր իրենց բնակարանը շինեցին ժայռի կողքին, նրանով պաշտպանված։ Զիներ այդ ժայռը, մրբիկը վաղուց ի վեր ավելած կլիներ իրենց փոքրիկ բնակարանը։

Բայց նոքա այլևս գրանից չեն վախենում։ Ժայռը քամու մերձեցումը սահմանափակել ե։ Նոքա տանիքը ծովացուվի սորթիներով ծածկեցին և բարերով ամրացրին, վորքան իրենց ուժն այդ պատեց։

Այժմ պիտի սպասել ձյունին, վորովհետև միայն այն ժամանակ, յերբ ամեն ինչ ձյունով ծածկելի, իրենց բնակարանը տաք կլինի։ Նոքա բավականաշափ աշխույժ են։ Գոյության սաստիկ պայքարը նրանց ժամանակ չի տա հուսահատության անձնատուր լինելու։ Աշխատանք շատ կա և հերիք ե ամբողջ որվան համար։ Միայն ճաշ պատրաստելն ահազին ժամանակ ե խլում։ Հետո, պիտի քարեր ու մամուռ հավաքել, նրանցով, ճարպի լամպի համար պատրույզ պատրաստել։ Բացի այդ, նոքա ամեն որ փոքրիկ եքսկուրսիաներ են կատարում, յեթե այդ թույլ ե տալիս յեղանակը. բարձրանում են ժայռերի վրա և այնտեղից հեռաղիտակով զննում են յերկիրն ու ափերը, հուսալով, բացի ծովացուկերից և ծովահորթերից, վորեւ այլ կենդանի արարածներ տեսնել։

Բայց այս կենդանիներն ել որեցոր քիչ-քիչ են յերեսում։ Սառուցն արգեն հաստացել ե. ցուրտը սաստկացել ե։ Սառցակուտից յերգի և տրաքտրաքոցի նման սոսկալի ձայներ են հասնում։

Սպոնամանիքն ուժեղանում ե և իր յերկաթե մամուլի տակ ամեն ինչ խեղդում։

Յեվ ահա, վերջապես, ձյունը յեկավ։ Յերբ մի առավոտ ինելզեն քնելու մեշոկից գուրս յեկավ և պատրաստվում եր ջուր պատրաստելու համար ձյուն բերելու յերթալ, տեսավ, վոր տան մուտքը ձյունով բռնված ե։

Նոքա մեծ գժվարությամբ ձյան միջից անցք բաց արին

և դուրս յեկան, և յերբ իրենց նախասեն յակի ձյունի պատից, վոր իրենք ելին կազմել գլուխները վեր բարձրացրին, ակամա բացագանչեցին.

— Յերկինքը, յեռները, ծովը, — ամեն բան անհալտացել է ձյան մրբիկի մեջ, վորը դեռ կատաղի սուլում եր, ձյան ամպերը քշում և վորոնք անթափանցելի վարագույրով նոցա աչքերից ծածկում ելին ամեն ինչ։

Նոքա վոչ մի կերպ չելին կարողանում ըմբոնել, թե ինչ պես իրենք փոթորկի մոտենալը չեն նկատել, չեն լսել քամու վայնասունը։ Բայց շուտով նոքա հասկացան, թե բանն ինչ ե։ Քամու բերած ձյան հակաչական շերաբ ծածկել եր այժմ և ժայռերը և խրճիթը։ Նոքա հանգստացան, խրճիթը տաք եր։ Փոթորիկը յերեք ցերեկ ու յերեք գիշեր մոնչում եր. Նոքա գրեթե ամբողջ ժամանակ պառկած ելին քնելու մեշոկում։ Յերբ փոթորիկը հանդարատեց, և նրան ուժգին սառնականիքը փոխարինեց, այն ժամանակ նրանք ձյան միջով անցք բաց արին և կերպից ծածկեցին կոշտ, սառած ձյան կտորներով։

Այժմ մենք այնպիսի դուռ ունենք, ինչպիսին շինում են եսկիմոսները. — հայտարարեց երիկը. — Մեր տունը կարդ ու սարքի մեջ ե գտնվում։

Յերեկը փոխվեց կեսորվա թեթև աղջամուղի, արևն այս չեր յերեսում։ Բայց դրա փոխարեն բենուային սպիտակ, սառած յերկրի վրա իր արծաթի փալըն եր սփոռում լուսինը, լուսավորելով ձյան անապատը, վոր կարծես սառել եր շրջապատող խորհրդագոր լուսթյան մեջ։

Սկսվեց բենուային գիշերը։

— Ինչքան ժամանակ ենք գտնվում մենք այստեղ — հարցրեց իելզեն զուխը քնելու մեշոկից դուրս հանելով և հենվելով ձեռքին։ Նա մտածկու նայեց ծովացուկի ճարպով վառվող լամպի կարմրագույն լուսին, վորի ճառագալթներն արտացոլում ելին առաստաղի մակերևույթի սառույցի բլուրեղների մեջ։

Երիկը նայեց խրօնոմետր-ժամացույցին։ Նոյեմբերի յեռասունն եր։

— Գրեթե յերեք ամիս, — պատասխանեց նա:

— Այս: Բայց ինչ որ և այսոր:

— Շաբաթ:

Խելգեն հանկարծ լաց յեղափ:

Երիկի սիրտը տխուր կծկվեց: Խելգեն այժմ հաճախ լաց եր լինում:

Անձայր գիշերն, առանց արևի լուսի ամենափոքր ցոլքի, սկսեց յուր ներգործությունն անել նաև Երիկի վրա: Զե՞ զոր նույնիսկ փորձված ճանապարհորդներն անգամ դժվարությամբ են կարողանում կռվել այսպիսի յերկար խափարի ճնշիչ ազդեցության դեմ: Միորինակությունը կամ ավելի ճիշտ ասած, 24 ժամ տևող գիշերները, վոչնչով չեցին խանգարվում և աղաների հուսահատ դրությունն ուժեղացնում եր: Նրանք սառցի վրա և հովտում յերբեմն զբոսանք եյին անում, ուր փոփած եր ձյունը և հեռուները չեցին գնում, վախճառվով, թե կմոլորվեն սառը մառախուզի մեջ, նույնիսկ լուսնի խաբուսիկ լուսի տակ, վորի տակ բոլոր առարկաներն ինչ վոր տարորինակ թափանցիկ տեսք են ընդունում:

Բայց բենոի ակամա ընակիչների հոգում դեռ ևս հույսը գառ ե, վորովհետև առանց հույսի վոչ մի մարդ չեր կարող ապրել: Տղաները հույս ունեյին, թե հովաի մոտով ինչ վոր ես կիմուսներ պատահաբար կանցնեն, և այդ պատճառով շարունակ ականչ եյին գնում, արդյոք հեռվից շան հաջոց չի լսվում: Բայց ձյունե անապատի լուսթյունը վոչ մի բան չեր խանգարում, և նրանք վորեն այլ բան չեյին լսում, բացի իրենց ձայնից և վոտքերի տակի ձյան ճրճոցից:

Նրանք իրենց պահեստի մոտերքում արջերի հետքեր եյին տեսել, և այդ պատճառով առանց հրացանի իրենց խրձիթից դուրս չելին գալիս: Սպիտակ արջերի, այսինքն՝ բենուալին գիշերների այդ տիրակալներին հանգիպելու միտքը՝ բարձրացնում եր նրանց յեռանդը, վոր, համենայն դեպս, նոցա համար ոգտակար եր: Մի անգամ նրանք սառցի վրա ինչ վոր սև կետեր տեսան և այն ընդունեցին մարդկանց տեղ:



Նկ. 2 նոկիմաները սպիտակ արջ են փորսում

լսելի չեղափ: Սակայն այս դեպքը նրանց յերկար խոսակցության նյութ ավեց:

Նրանք ցուրտը հիմա դժվարությամբ ելին տանում, վորով հետեւ նրանց հագուստները պատառուավել և կախ ելին ընկել ծգեններով, իսկ մուշտակները նրանց համար չափազանց մեծ ելին:

Այս պատճառով նորա ժամանակի մեծ մասն անց ելին կացնում ընկելու մեջոկում, պառկած:

Խելգեն շարունակում եր լաց լինել: Երիկը գրկում և ամեն կերպ միմիթարում եր նրան, պահպանելով նրա մեջ հույս կերպ միմիթարում եր նաև, պահպանելով նրանց անապատը տասն-որ: Մենք փորձություններն ու սառցային անապատը տասն-եհինգ տարեկան Երիկին հասուն տղամարդ դարձրին:

— Իմ սիրելի, իմ խելքը յեղբայր, — ասաց նա Խելգելին, ինչու յես լաց լինում: Լսիր, չե՞ վոր մեզ համար ալստեղ այս պես տաք ու հարմար ե: Մենք չենք սառի ու քաղցած չենք պես: Մենք ամեն որ ծովացուլի տապակած միս կուտենք, միա: Մենք ճարպով ապուր, սիսեռյա կոլբաս, իսկ կիրակի որերը սուրճ կիսմենք: Մեր ճարպն ու ուտելիքը մեզ դեռևս մի քանի ամիս կիսմենք: Մեր ճարպն ու ուտելիքը մեզ դեռևս մի քանի ամիս կիսմենք: Կիսմենք առևի առագալթների ազդեցությամբ շարժելով սկսի, իսկ յերբ առևի ճառագալթների ազդեցությամբ շարժելով սկսի, ծովն ազատվի, մենք նավակ կշինենք... կամ ափի յերկարությամբ կը տալինք, մինչև մարդկանց կհանգիպենք և կամ, վերաբեր ջապես, նազ կնստենք: Ինչու յես հուսահատվում, սիրելի Խելգե:

— Ալի, այդ չե իմ ուզածը, — ասաց Խելգեն հեկեկանքների միջից: — Յես հույսերս չեմ կորցրել... բայց դու մոռացել ես, թե ինչ որ ե այսոր: Նոյեմբերի յերեսունն ե, մորս ծննդյան որը:

Երիկը հիշեց: Իսկապես այդ որը մայրիկի ծնունդն եր: Յեվ ահա նրանք միանգամից անձնատուր յեղան այն հիշողություններին, թե ինչպես անցյալ տարի տոնեցին այդ տոնը: Ինչ լավ եր: Ամեն, ամեն բան, ամեն սամարաժամանություն հիշեցին: Հետո խոսեցին, թե ինչքան լավ կլինի, յերբ տուն կվերադառնան: Ի՞նչպես հայրն ու մայրը կուրախանան և ի՞նչպես կպատմեն այն ամենը, ինչ վոր այստեղ յեկել եր իրենց դիմով:

Երիկը հանեց իր հիշատակարանը: Նա վաղուց բան չեր գրել այնտեղ: Բայց քնելու մեշոկում որերը մեկը մյուսի նման ելին: Այժմ նա գրեց. «Նոյեմբերի յերեսուն, մորս ծննդյան որը»: Ուրիշ վոչինչ բայց այսքանն արդին բավական եր:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Նորից փորորիկներ. — Տաղեկալի միորինակուրյուն. — Պատկերախաղը. — Լրագիր գտնելը. — Սրցերի այցելուրյունը. — Սոսկալի գյուղը. — Հուսահատուրյունը. — Խելգեյի փալլուն միտք. — Սահնակների հետք. — Երիկի հետազգուրյունը. — Վերակենդանացող հովսեր.

Խեկտեմբերը մեղմ յեղանակով սկսվեց, ջերմաշափը հանկարծ համարյա տաս աստիճան բարձրացավ, և թեպետ զեռ ևս ցուտ եր, բայց սառցային այս ցրտին տղաներն այնպես ելին վարժվել, ասես արեի տաքություն լիներ այդ: Բայց երիկը բնեռային յերկրի կլիմայական այնպիսի փորձառություն եր ձեռք բերել, վոր ողի ջերմության հանկարծակի բարձրանալը նրան անհնգության մեջ գցեց: Նա գիտեր, վոր այդ նշանակում ե՝ յեղանակը պիտի փոխվի և փոթորկալից դառնա: Իսկապես, հեռվից լսվում եր քամու սուլոցը, և յեթե ձյունախառն մըրեկի սկսվեր, նոքա կրկին ստիպված պիտի լինելին գիշեր

ու ցերեկ անցկացնել քնելու մեշոկում, և այդպես գուցե շատ որեր ու գիշերներ:

Մահրաժեշտ եր շուտով մսի բավականաշափ պաշարով պարենավորվել և երիկը դեպի փոսն ուղեռորվեց, վոր ծառալում եր նրանց իբրև մառան, և ուր պահպանվում եր նրանց մթերեր, քը, վորպեսզի նախքան փոթորկի սկսվելը, ինչ վոր պետքն ե, բերի արդտեղից: Նրանց ըոլոր հույսերը կապված եյին այս բերի արդտեղից: Նրանց ըոլոր հույսերը կապված եյին այս մառանի հետ, այնտեղ մսի այնպիսի պաշար կար, վոր հնարավորություն կտար իրենց գոյությունը մինչև ամառ շարունակելու:

Երիկը դուրս յեկավ և կապտավուն ձյան միջով շարժվեց: Նա հույս ուներ հասնել մառանն ու վերառանալ, նախքան փոթորկի սկսվելը: Բայց հանկարծ ձնախառն փոթորիկը դուրս պրծավ, և նրա շուրջն ամեն ինչ պտտվում եր կարծես դժուարավ, և նա ազգի ժամանակ գտավ խրճիթը համելու: Խայլին պարի մեջ: Նա հազիկ ժամանակ գտավ խրճիթը համելու:

Զյան հյուսի պես հանկարծ գլորվեց գեպի հովիտը: Սառ ցա հազարավոր բարակ ասեղներ ցցվեցին նրա դեմքի մեջ, թափանցեցին նրա հագուստների ամեն մի ծալը և սկսեցին փետացնել նրա մարմինը: Նա այս փոթորկի մեջ հազիկ եր կարողանում շնչել ու վոտքի վրա մնալ: Մեծ դժվարությամբ, կարողանում շնչել ու վոտքի վրա մնալ: Հետեւ գտավ խրճիթը: Հենեալով և միանգաչորենիթ անելով, նա մտավ խրճիթը: Հենեալով և միանգաչորենիթ այն պիտի կերպար յեղած՝ նա վերջապես այնտեղ հասավ և ստիպացային մեծ ճանապարհորդության համար, ուր հույս ունեցին վերջապես մարդիկ գտնել:

— Խելգե, մենք պետք ե պաշար տնտեսենք, — ասաց Երիկը:

— Այս... ավելի շատ քնենք: Այն ժամանակ բաղդ չենք զգա: — Բայց չե վոր անվերջ քնել չի կարելի: Նրանք չընեցին, բայց ինչ վոր թմրության մեջ ընկած պառկեցին, ասես թե

նրանց գլխում բոլոր մտքերը հանգան։ Հավիտենական միորինակությունը և տեսական մթությունը իրենց վնասակար ազդեցությունն ելին ունենում նոցա վերա։ Նրանք անկարող յեղան թոթափել այդ թմրությունը, վորով համակվել ելին։ Այս, յեթե նրանք վորեև զիրք ունենային։ Նույնիսկ ամենաչոր ուցամաք դպրոցական դասագիրքը նրանց կուրախացներ։ Վաղուց արդեն նորա հորեղբոր պայտուսակը քրքրել ելին, բայց այնտեղ վոշինչ չելին գտել, բացի ինչ վոր առևտրական տան մի զույգ հայտարարությունից։ Յեզ ահա զբաղվելու համար մի կտոր փայտե տախտակ ճանկուելով նկարախաղ պատրաստեցին։

Նկարախաղ խաղանք, — ասաց Խելգեն, — միայն փոքրիկ քարեր չունենք։

— Մենք փոխարենը ատրճանակի փամփուշտներ գործ կածենք, — պատասխանեց Երիկը։ — Մի նոր տուփ վերցրո՛ւ, հրեն, այնտեղ ե, սուրճի եքստրատի տուփի մոտ։

Խելգեն բաց արակ արկղը և ուրախությունից ուժգին բղավեց։

Փամփուշտները փաթաթված ելին լրագրի թղթով։ Տուփը չափազանց մեծ լինելու պատճառով, փամփուշտները փաթաթել ելին մի ամբողջ լրագրով, վորպեսզի իրար չդիպչեն։ Այդ ամբողջական մի համար եր՝ նույնիսկ մի թերթ հայտարարությունների հավելվածով, վոր լույս եր տեսել սեպտեմբերի կեսերին։

Յեզ ահա այն ժամանակ, յերբ բևեռալին մըրիկը կատաղությամբ անցնում եր «Հուլսի հովտով», և հյուսիսային քամին հավիտենական սառուցների գրկից թոշելով՝ սուլում ու վոռնում եր զըսելում, տղաները քնելու մեշոկի մեջ պառկած, դիուխներն իրար կպցրած, ծովել ելին հին լրագրի վրա, վորի տառերը ծովացուի ճարպե լամպի դողով լույսի տակ կարծես պարուժ ելին։ Յեզ կարդալով՝ մանուկներն իրենց մտքերով սկսեցին սլանալ հազարավոր մղոններով հեռու այնտեղից, ուր գտնվում ելին։ Այդ ըովելին մոռացան իրենց շրջապատող պայմանները, բևեռային գիշերը, սառցային ամայությունը և փոթորկող մըրիկը։

Նոքա լրագրում պարապ ընակարանների մասին մի շարք հայտարարություններ կարգացին և սկսեցին փնտոել այնպիսինները, վորոնք եժան ու լավ ելին համարում։ Նոքա կարգում ելին փողոցների անունները, փնտում ելին իրենց ծանոթ մայթերը և պատմում միմյանց նրանց դիրքը։ Հետո զանազան ազատ պաշտոնների մասին հայտարարություններ կարգացին և խորհում ելին, թե նրանցից վորը կուզեն հանձն առնել։

Գլխավոր թերթի վրա նրանք կարգացին գնացքների ժամանումների և մեկնումների ցուցակը, և այս բանն առիթ դարձավ Դանիան մտքով ճանապարհորդելու։ Հետո մի գդալ քաղցակենիով, — հրաշալի բան և բևեռալին աշխարհում, — գրադրակենիով, — հրաշալի բան և բևեռալին աշխարհում, — գրադրական այն մասին, թե ով ճիշտ կգուշակի լրագրի տողում գըտնը վորող տառերի թիվը։

— Կամաց, — հանկարծ ասաց Խելգեն, — դուրսը ինչ վոր մեկը կա։ Ականջ զբին։ Իսկապես, մեկը տանիքը ճանկուտում եր։ Միթե, Երիկը վճռեց դուրս նայել։ Փոթորիկը հանդարտել եր և լուսինը պայծառ լուսավորում եր։ Յեզ ահա նա տեսվել եր և տանիքը ճանկոթողը։ Աղվեսներ ելին։ Ծովասակ, թե ով ե տանիք ճանկոթողը։ Երիկին տեսնելով՝ նըցուլի կաշին գալթակղեցը եր նրանց։ Երիկին տեսնելով՝ նախկին րանք փախան, և նորից սառցային ամայության մեջ նախկին լուսավորությունը թագավորեց։

— Խելգեն, այստեղ յեկ, — կանչեց Երիկը, — փոթորիկը դանդաղեց։ Գնանք միս բերելու։

Խելգեն հրացանը ձեռին դուրս յեկավ վորեև դեպքի համար պատրաստ։ Զյան մակերեսույթն իր անարատ կուսությամբ փուփել եր նրանց առաջ։ Բայց ճանապարհը փակող սառցե լեռան մյուս կողմում այլ պատկեր տեսան։ Զյունը տեղ տեղ փոս եր ընկած և առաջից գնացող Խելգեն գոչեց։

— Երիկ, շուտով այստեղ յեկ։ Ինձ թվում ե այստեղ արջեր լին յեղել։ Իսկապես, չորս կողմում արջերի հետքեր արջեր լին յեղել։ Միթե արջերը զիտելին, թե այստեղ ծովակեին յերեսում։ Միթե արջերը զիտելին, թե այստեղ ծովակեին յերեսում։ Այդ գեղ վոր իրենք մեծ քարերով ցուլի միս կա պահպած։ Բայց չե վոր իրենք մեծ քարերով ցուլի միս կա պահպած։ Հավանաբար արջերը իզուր ջանքեր ելին թափել։

Տղաներն առաջ վաղեցին ու տեսան, վոր գժբախտություն և պատահել։



սառցի վրայով վազել սահնակների հետքեր փնտոելու համար: Բայց նա վոչինչ չգտավ: Կարկամած և ատամները ցրտից կըրճը տացնելով, վերադարձավ և աշխատեց յուր հուսահատությունը Խելգեյից թագյնել, բայց ամեն անգամ այդ դժվար եր լինում:

Վոչ միտեղ, մարդու գեթ աննշան հետք անգամ չկար: Յեվ նա ավելի քան համակվեց այն համոզմամբ, թե «Հուլսի հովիար» գտնվում եւ մարդկային վորեւ բնակությունից հեռու, խորը հուսախում, բեկուային ամայության մեջ, ուր մարդկային վուրքը դեռևս մուտք չի գործել:

Բայց Երիկը չի կամենում յուր յերկուդները Խելգեյին պատմել: Նա չեր ել հասկանում, վոր Խելգեն ևս վաղուց մտածում եր այդ բոլորը:

Շուտով ծնունդ ե: Զորս որ հետո, այնտեղ, հեռավոր հայրենիքում տոնածառ կլուսավառեն: Խորին հուսահատությունը սողոսկում եր Երիկի հոգին: Վարքան զուրկ և հեռու եին իրենք ամեն տեսակի ուրախություններից և վորքան անբախտ, ընկած այս հուսահատ վասնգների գիրկը, բեկուային սոսկալի ամայության մեջ: Ո՞վ իրենց ոգնության կգա:

Յեվ մինչ այժմ տղամարդու պես դիմացող տղայի կրծքից ակամա հառաջանք դուրս թռավ:

Այդ ըովելին Խելգեն վեր կացավ մեշոկից ու բոնեց նրա ձեռքը:

— Երիկ Երիկ, ինչու մենք այս բանը առաջ չեյինք մըտածում, — բացագանչեց նա:

— Ի՞նչ բան, — հարցրեց զարմացած Երիկը:

— Այ այն... վոր այս հովիտը գտնվում է ինչ վոր ծովախորշի վերջում, — ասաց նա կակազելով....

— Հավանական ե, բայց դրանից ի՞նչ:

— Դե մի տեսութիւն Խելգեն վերցրեց ձողը և մեշոկի մակերեսութիւն նստած յեղյամի վրա նկարեց ափի գծագրությունը, վորն իրենք այնքան հաճախ դիտել ելին ժայռի կատարից: — Տեսնում ես, — ասաց նա, — ափը յերկու կողմի վրա մի մեծ աղեղ կազմելով զբկում ե ծովախորշը և յերկու կողմերն ել անհետանում են հօրիզոնում: Նշանակում ե, այս խորշը խորը կերպով մտնում ե ցամաքի մեջ:

— Լավ, մենք այդ առաջ ել գիտեյինք:

— Բայց մենք չեյինք մտածում վոր... Այս, Երիկ... բայց իրենց սահնակներով հյուսիս կամ հարավ մեկնող եսկիմոսներն անշուտ ընտրում են ամենակարճ ճանապարհ: Նույներն անշուտ ընտրում են ամենակարճ ճանապարհ: Այդքան ափի յերկարությամբ չեն անցի, այլ կկարեն խորշը: Այդ կարճ ե:

— Հասկանալի յե, — համաձայնեց Երիկը:

— Այս, իսկ հիշում ես այն սև կետերը, վոր մենք տեսանք սառցի վրա:

— Այս, մենք մարդու տեղ գրինք:

— Յեվ կարող եյին մարդկակ լինել... կարող ելին սահնակներ լինել: Չե վոր այստեղից, վերեկից ամեն բան մոտ ենակներ յերեսում, քան թե իրոք ե, Ոդն այնքան պարզ եր: Գուցե յերեսում, քան թե իրոք ե, Ոդն այնքան հեռավորության վրա յեր գտնը այստեղից մի քանի մզոն հեռավորության վրա յեր գտնը վում այս:

Երիկը յեղբոր դատողություններից ապշեց:

— Խելգե, ախ, Խելգե: Այս, չե վոր գու արդարացի յես: Այս, գու իրավացի յես, — բացագանչեց նա:

Յեվ Երիկը վճռեց անմիջապես ափ մեկնել:

Անսովոր, պայծառ լուսնակ գիշեր եր: Լուսինը պայծառ փայլում եր յերկնքում, և կարծես թե բեկուային աշխարհն ուղարկում եր իր բոլոր լացուցիչ գեղեցկություններով դիմավողում եր բոլոր լացուցիչ գեղեցկություններով դիմավողում եր Երիկին: Քամու ամենաթեթև հոսանք անգամ չկար, և չորս ըել Երիկին: Քամու ամենաթեթև հոսանք ամայության սովորական, հանդիսական վոր լուսությունը:

Երիկը մտքերով հափշտակված եր, նույնիսկ ցուրտ չեր զգում, և խոր փոսերի և սուած ձյան շերտի վրա ուղղակի զեպի ծովախորշն եր վազում:

Նա իջավ սառցի վրա և սկսեց առաջ վազել ձյան բարակ շերտի վրայով: Նա հույսերով լի յեր և չեր ել մտածում, թե այս հույսերը խարուսիկ կարող են լինել:

Հանկարծ կանգ առավ և ուժգին բղավեց:

Իր առջև ձյան վրա սահնակների թարմ հետքեր ելին յերեսում, վորոնք ծովախորշի լախքով մեկ հրվանդանից ձգվում

Ելին մինչև մյուսը։ Այդ մի ճանապարհ եր, վորով ոգտվում  
ելին բևեռային յերկիրների բնակիցները։

Լավ, այդ այդպես ե, բայց ի՞նչ ոգուշ կարող ե տալ իրենց:

Հնարավոր ե, վոր այստեղ նորից մի քանի անգամ մարդիկ գան ու յերթան, բայց ինչպես կիմանան, թե այստեղ՝ ափին, ամայության մեջ՝ յերկու տղա ընկած դեգերում են:

Բայց Երիկն այսպես մտածում եր նաև առաջ: Նա հրացանի կոթի վրա մի թուղթ ամրացրեց, ուր դանիելը լեզվով գրած եր իրենց ոգնության համնելու խնդիրը և պաք նկարեց, վոր ցուց եր տալիս իրենց բնակարանի ուղղությունը: Սահնակների հետքին մոտիկ՝ հրացանի փողը ձյան մեջ խրեց, այսպես վոր կոթը՝ վրան կպցրած թղթով, գեպի վեր ցցված մնաց. Նա այս նկարի ոգնությամբ աշխատում եր եսկիմոսներին հասկացնել, վոր այնտեղ, ափին, մարդիկ կան, վորոնք ոգնության են սպասում:

Ցեթե մոտ որերումս, նախքան փոթորիկն սկսվելը, ժեկն ու մեկը գա այստեղ... կարող ե պատճելու...:

Նա այլևս չեր ուզում մտածել: Համենայն դեպս, այստեղ  
ինչ վոր տեղում մարդիկ են յեղել, վորոնց կարելի յե հանդի-  
պել, յեթե վոչ հիմա, այդ գեպօւմ՝ սինչ ամրան գալր:

«Մինչ այդ կղիմանանք», — վճռեց յուր մտքում Երիկը ու յետ դարձավ:

Ուրախությունից նա ցուրտ և հոգնություն չզգաց: Հեռ-  
վից հույսը ժպտում եր նրան: Նա չեր ել խորհում, թե եսկի-  
մուսների բնակարանից մինչև Դանիա վորքան հեռու յե. կա-  
րեղը այս ե, զոր այստեղ մարդկի կան, և ննարավոր ե փըրկ-  
վել: Ի՞նչ անբախտություն կլինի, յեթե նոր տարին ել քննելու  
մեջոկումն անցկացնեն: Այժմ նրանք կարող են սպասել:

— Խելգե, Խելգե, — կանչեց նա զեռհս հեռվից. — Յես հետքեր եմ գտել:

Մենք կազմատվենք, նորից կընկնենք մարդկանց մեջ:

— Ճիշտ ես ասում, — գոչեց Խելզեն և ուրախության արդյունքներն աչքերին՝ թռավ յեղբորը դրկելու:

— Այստեղ լաց լինել չի կարելի, — ասաց Երիկը. Զե՞ վոր

— Ինչու դուք ինքներդ չերթաք այս նավով: Չե՞ վոր դուք ել կարող եք Կովենհավենուա ապրել Արնալուկի հետ: Յես հավատացած եմ, վոր այդ գեղքում նա ուրախությամբ Դանիա կերթա:

Երիկը, վոր մինչ այդ լուռ եր, նույնպես մասնակցեց խոսակցությանը և սկսեց Նորդստրանդին համոզել:

Իսկապես վոր մինչև այժմ այդպիսի միտք նրա գլխով չեր անցել: Նա յերբեք չեր մտածել Տասսինորկից մեկնելու մասին: Գուցե այդ առաջ եր յեկել նրանից, վոր նա չափազանց հաշտվել եր այն մտքի հետ, թե ինքը չպիտի հեռանա Տասսինորկից: Հայրենիք վերադառնալու մասին նա չեր մտածում: Նա այնտեղ չափազանց շատ վշտեր եր կրել: Բայց այդ յեղել եր առաջներում: Այժմ պայմանները փոխված ելին, և յեթե յերթար այնտեղ, տեղավորվեր, առանձին գժվարությունների չպիտի հանդիպեր, նրա կյանքն այդ գեղքում ուրախության շողով կլուսավորվեր: Նրա համար այդ ձառագալթն Արնալուկն ե: Յեվ նա Արնալուկից չպիտի բաժանվի:

Վորքան տարրորինակ եր, վոր յերեխայի խոսքերը միայն ստիպեցին իրեն մտածել այդ մասին:

— Իե ինչ արած,—ասաց նա վերջապես:—Խելգեն իրավացի յե, մենք միմյանցից չպիտի անջառվենք: Դու կմնաս այստեղ, և յեկող տարի մենք միասին Դանիա կերթանք:

Արնալուկն ուրախ բացագանչությամբ փաթաթվեց հոր գողովը:

\* \*

Վերջապես Տասսինորկում իսկական ամառ սկսվեց: Ծովը սառցից ազատված՝ հեռվում կապուտակին եր տալի. միայն

սառցասարերն են լողում ջրերում՝ որորվելով ալիքների վերա: Լողացող սառույցների վրա յերեսում են ծովահորթեր և ծովացուկեր: Զկները շատացել են, իսկ սարերն ու ժայռերը լիքն են թռչուներով: Ամեն տեղ կյանք յերեաց: Բնությունն արելի ճառագալթների ազգեցությամբ՝ ձմրան քնից արթնացավ, չորս կողմում ամեն ինչ զնծության մեջ ե:

Տասսինորկը գտնվում է կղզու վերա: Արելի ճառագալթները ձյունը տեղ-տեղ հալեցին, և այնտեղ, ուր սառած գետինը հալվեց, դուրս յեկան կանաչներ, մամուռ և նույնիսկ փոքրիկ, դժգույն ծաղիկներ:


Հեռվում, ափերին, թռչունների հովտում և վրորապտույտ խորշում, վորը մի քանի մղոն յերկարություն ունի, բուսականությունը ցուրտ քամիներից պաշտպանված լինելով՝ ավելի լավ և զարգանում: Այնտեղ ամառն ավելի նկատելի յե, քան Տասսինորկում: Այնտեղ, հովտի պաշտպանված տեղերում նույնիսկ հողամասեր կարելի յե գտնել, վորոնք անեմոնի և պայծառ, գեղին ծաղիկների փթթող գորգով են ծածկված:

Արնալուկը հպարտությամբ ցույց է տալիս Դանիացի իր բարեկամներին այդ խայտաբղետ գորգը: Ամենահեռավոր հյուսիսում ել ամառը ծաղիկներ են լինում....:

Յերեխանները հիմա հաճախ զբոսնում են ծովախորշում, կանաչներ ու ծաղիկներ են հավաքում և ահագին փնջերը ձեռքներին՝ գայլի ախորժակով տուն են վերադառնում: Ցնծալից, կենսուրախ նրանք չեն նկատում, թե ինչպես է ժամանակը սլանում և անջատումը մոտենում:

Գրենլանդացիքիք ել տուն չեն նստում: Նրանց խրճիթների մեծ մասը ամառները զատարկ են մնում, մի քանիսի նույնիսկ ծածկը վերցվում է, վորպեսզի քամիները և արևն ազատ մուտք ունենան և ողը մաքրվի: Բնակիչները, սովորաբար, ճանապարհորդելու յեն դուրս գալիս իրենց կանանցով ու յերեխաններով: Հենց վոր խորշը սառցից ազատվում է և հովտում գրենլանդակների ծաղկան մանրիկ ծաղիկներն ու կարմիր պտուղներն են յերեսում, վորոնք ձմեռել ելին ձյան տակ, իսկ լեռներում և ժայռերի վրա թռչուններն են կչկչում և մժուկների խմբերը հայտ-

նըգում, Տասսինորկը միանգամից դատարկվում ե: Գրենլանդացիք ուղևորվում են այնպիսի տեղեր, ուր արածում են յեղջերուները, վորովհետև ամառային վորսի որերն արդեն սկսվում են: Հրացանների կրակոցները լսվում են: Գրենլանդիացիք վորսորդները պարենավորվեցին յեղջերվի մոլթիներով, ճարպով, վորշատ սննդաբար ուտելիք ե, և ձմրան քաղցից հետո կուշտ ու պինդ կերան:



Նկար 7

Պինգվիտը շատ ե սիրում ամառը: Նա ել մնացած վորսորդների հետ ուղևորվում ե, բայց վորեւ տեղ չի կարողանում մնալ, այլ կրկին վերադասնում ե Տասսինորկ: Նրան կարելի յետեսնել ծովափում նստած՝ կարմիր ջրաբույսեր խժոելիս: Յերեկ նա յեղել եր Նիպատ հոգուում, ուր վրան եր խփել Պանիկպարկը և ուր շատ յեղջերուներ կային:

Պանիկպարկի տղան մի հրացան, մի իսկական հրացան եր նվեր ստացել, և Պինգվիտը նրան շատ եր նախանձում: Զե՞ վոր ինքը՝ Պինգվիտը հրացան չունի, այլ միայն նետ ու ազեղ: Ճիշտ ե, դրանով նա յեղջերուներ և նապաստակներ ե խփում, բայց միթե նետ-աղեղը հրացանի հետ համեմատվել կարող ե:

Հրացանը բարձր վորոտում ե և յերկնագույն ծխի ամպը կապուտ ծուխ բաց թողնում փողից. իսկ այդ Պինգվիտին շատ գյուր ե գալիս: Ա՛խ, յեթե ինքը իսկական հրացան ստանար և կախեր իր ուսից: Ի՞նչ բաղդավորություն կիներ այդ: Առևտրական ընկերության պահեստում շատ հրացաններ կային, բայց մի հրացանին մի քանի յեղջերվի մորթի պետք եր վճարել....

Պինգվիտը նստել և այս մասին եր մտածում, յերբ հանգարծ լսեց իրեն կանչող Արնալուկի ձախը:

— Պինգվիտ, լսիր թե ինչ եմ ասում: Խելգեն ու Յոնասն ուղում են գնալ յեղջերուներ վորսալու, բայց յեղջերուների տեղը չգիտեն: Նոքա խնդրում են, վոր իրենց առաջնորդես: Բայց լավ լսիր, թե ինչ մտածեցինք յես և երիկը, վորը Կարածովախորշում կյանքդ ազատեց....:

Նա կուացավ մինչև Պինգվիտի ականջը, վոր ծածկված եր մե, կեղտոտ մազերով, և ինչ վոր բան շնչաց նրան: Պինգվիտը նույնիսկ վեր թռավ, և նրա դեմքն ուրախությունից փայլեց:

Յոնասի և Խելգեյի եկակուրսիան, վորի ընթացքում առաջնորդողի դերը Պինգվիտը պիտի կատարեր, մեծադղորդ անուն ստացավ՝ «Արշավախումբ յեղջերուների դեմ՝ դեպի արևելյան ծովախորշը»:

Ուղևորման համար ընտրվեց բևեռային կարճատե ամառվան ամենալավ որը:

Որը չեր շարժվում, և մեծ նավակն առանց դժվարության սահում եր ծովախորշի հարթ, բյուրեղիա մակերեսութով. ջուրը կատարելապես թափանցիկ եր, և պարզ կարելի յեր տեսնել լողացող ձկները, վորոնք կարծես հալածում ելին միմյանց:

Տասսինորկը շուտով նրանց աչքից աներեսության Պինգվիտը ղեկավարում եր: Նավը պտտվեց հրվանդանի շուրջը և ուղղվեց ծովախորշի ներսերը, ուր Խելգեն և Յոնասը գեռնս և ուղղվեց ծովախորշի ներսերը, ուր Խելգեն և Յոնասը գեռնս մի անգամ չելին յեղել: Նոքա ամբողջ յերկու ժամ թիավում մի անգամ չելին յեղել: Վերջապես նոքա ափ հասան, և Պինգվիտն ասաց վարում ելին: Վերջապես նոքա ափ հասան, և Պինգվիտն ասաց նրանց.

— Սա Տուլակկատլարիա կղզին ե: Այստեղ կանգ կառ-

նենք։ Նրանք մոտեցան ափին և դուրս յեկան հովիտը, վոր շըջապատված եր մասամբ մամուռապատ զառիվեր սարերով, մասսամբ մամուռով ծածկված։ Այստեղ ծաղիկներ քիչ կալին, և տեղ-տեղ նույնիսկ ձյուն կար, ինչպես Տասսինորկում։ Բայց կարմիր պտուղներ՝ այստեղ շատ քիչ կալին։ Թե ինչ մեծության եր կղզին նորա վորոշել չկարողացան, վորովհետև միմիայն հովիտն եր լեռնում։ Պինգվիտը մատնանշեց արևելքը Յեղջերուներ այստեղ պիտի փնտռելին։ Ինքը կմնա նավում ու մինչև նրանց յեղջերու վորսալը, ձկներ կը ունի, կամ գուցե, կը նի, — դեռ ինքն ել չգիտի, թե ինչ կանի։ Նրանք բորբոքված ելին շատ շուտով յեղջերու տեսնելու տեսնով։ Այս անգամ չեն վրիպի։ Յեկ նրանք ուրախ քայլեցին առաջ, հաջող վորսի մասին յերազելով։

Դեռ շատ վաղ եր։ Զարմանալի յէ, թե յեղջերուները վնրքան հեռուներն են արածում, և վորքան խարուսիկ են այստեղ տարածությունները, — մտածեցին նրանք։ Սակայն նորա արագ ոլացան, իսկ Յոնասն ու Խելգեն սկսեցին մոտենալ նրանց։

Դժգոհ, հոգնած և քաղցած՝ նորա նավ՝ վերադարձան։ Բարեբախտաբար, Տոնգիգուարկան լավ պաշար եր դրել նրանց հետ։ Այս, ինչպես ուստել են ուզում։ Հետո տուն կվերադառնան, վորովհետև ինչպես յերեսում ե, հաջող վորսի հույս չկար Բայց այդ ինչ ե պատահել Պինգվիտին։ Նա ըարձրածայն լացով ու գոչումով ընդառաջ ե վազում։ Այս ինչ ե նշանակում։ Պինգվիտն, ընդհանրապես, լաց լինող պտուղ չե։ Ի՞նչ ե պատահել։ Պինգվիտը մոտ վազեց և գրենլանդերեն տաք տաք խոսեց։ Նորա այդ լեզուն չգիտեն, բայց նրա շարժումներն ու զիմագծի խաղերը բացատրում են թե բանն ինչ ե։ Շարժումների (ժեստ) լեզուն, չե վոր սիջազգային լազու յե։ Իսկապես վոր, ինչ վոր սոսկալի բան եր կատարվել, և Պինգվիտի արցունքների հեղեղը հասկանալի յեր։ Նավակը ափից պոկ եր յեկել։ Ծերելի, ինքը թույլ եր կապել, և յերբ սկսել եր ափին պտուղներ հավաքել, այդ ժամանակ կտրվել եր ու լողացել դեպի ծով։

Ահա, այնտեղ դեռ կարելի յէ նշանակել մի փոքրիկ, սկզբանակ հեռանում ե։

Այն, նրանք հեռվում շատ սկ կետեր են տեսնում, հավանորեն, այնտեղ ե նաև իրենց նավը։ Սակայն ինչ անեն հիմա։

Խելգեն պատրաստ ե լաց լինելու։

— Հիմա ինչպես պիտի տուն վերադառնանք։

— Ել ինչպես, — ավելացրեց Յոնասը, — ինչպես կերթանը այստեղից։

— Այս, անշուշտ, Տասսինորկից մեզ ոգնության կգան, հենց վոր տեսնեն, սենք չենք վերադառնում։ Իսկ մինչ այդ՝ մենք կուտենք և կընենք։

— Այն, պետք ե կազդուրվել բարեբախտաբար, պաշար ունենք, ուրախացավ Խելգեն։ — Պինգվիտ, այստեղ բեր պաշարի գամբյուզը։

— Չեմ հասկանում, — պատասխանում ե Պինգվիտն ապուշ դեմքով։ Խելգեն սկսում ե շարժումներով բացատրել նրան։ Խփում ե յուր փորին և ցույց տալիս բերանը։

Պինգվիտը շփոթված շարժում ե յուր թափ, սկ գլուխը։

— Ուտելիք չկա, — ասում ե նա, — ուտելիքը նավակումն ե... Հրեն այնտեղ...։

Նա ցույց ե տալիս ծովի կողմը։

Գործը լրջանում ե... ուրեմն, նրանք վոչ ուտելիքը ունեն, վոչ քնելու մեջոկներ, վորի մեջ կարողանալին գիշերել, վոչինչ չունեն։

Սակայն, Պինգվիտն ոգնության կդա։

— Պինգվիտն ուտելիք կդանի, — ասում ե նա Խելգելին, — հրացանն ինձ տնը։

Բայց Խելգեն վրդովված ե։ Հրացան կտա նրան, վմաց չե։

— Այս դու, փոքրիկ հիմքը, — բացականչեց նա։ — Դեռ հրացանս ել քեզ տամ։ Յեկ վոչ մի գնով... հասկացար։ Պինգվիտը, վոչինչ չպատասխանելով, հանգիստ նստեց քարի վերա, հանեց յուր փոքրիկ, ծխից սկացած չիրուխը, լցրեց գրենլանդական ծխախոտով և ծխեց։

Յոնասը, վոր ծխախոտ չուներ, նախանձով նայում եր նրան:

Քաղցը շատ զգալի յեւ Խելգեն և Յոնասը պտուղներ են հավաքում, բայց դրանք չեն կշտացնում և Տոնգիգուարկի դրած պաշտին չեն կարող փոխարինել:

Յոնասը վճռեց Պինգվիտի հետ խոսել:

— Լին, — ասաց նա նրան, — լրացնելով յուր ճառը շարժուձերով. չե՞ վոր Տասսինորկից այստեղ նավակ կդա: Պինգվիտն ասես թե այս անգամ միանգամից հասկացավ նրան ու դանիելեն պատասխանեց.

— Վոչ վոք չի դա այստեղ, վոչ վոր չգիտե՞ ուր ենք մենք:

Մեզ կարող են ամիսներով փնտռել և չգտնել…:

— Այս, նա ճիշտ ե ասում, — տիրությամբ համաձայնեց Յոնասը: Բա ինչ անենք:

— Բարձրանանք սարը և այնտեղից դիտենք կղզին, — առաջարկեց Խելգեն:

Բայց գեղի լեռն ինչպես ճանապարհ գտնենք: — Առանց Պինգվիտի այնտեղ չենք կարող հասնել:

Խելգեն կանչեց Պինգվիտին և աշխատեց նշաններով հասէ կացնել նրան, թե նա պետք ե ցույց տա իրենց՝ լեռ տանող ճանապարհը:

Պինգվիտն ամենաանմեղ ժայիտով նայեց նրան և ասաց. — Հրացանը…:

Խելգեն վոտքը խփեց գետնին.

— Վոչ, դու չես ստանա իմ հրացանը…:

Պինգվիտը վոշինչ չպատասխանեց, շուռ յեկավ և գնաց: Դեռ մի բոպե չանցած՝ նա անհայտացավ, և նոքա չիմացան, թե նա ուր ուղեորդեց:

Նրանք նստել եին անշարժ ամբողջ մի ժամ և իրենց անբախտ և անոդ ելին համարում: Միակ մարդը, վոր կարող եր նրանց ոգնել, Պինգվիտն եր, բայց հայտնի չեր, թե ուր ե կորել նա:

— Առանց Պինգվիտի մենք այստեղից գլուխներս չենք

ազատի, — դժկամ ձևով նկատեց Յոնասը: — Ավելի լավ կը լիներ, հրացանը նվիրելիր, Խելգեն:

— Յերբեք, քանի վողջ եմ — համառորեն պատասխանեց Խելգեն: Յես քեզ ասում եմ, Յոնաս, վոչ մի դեպքում այդ չեմ անի:

— Դե ինչ արած, չե՞ վոր հրացանը քեզ ե պատկանում... տիրությամբ ասաց Յոնասը:

Բանը բուրդ ե: Նորա քաղցած են, իսկ ուտելու բան չկա, բացի պտուղներից:

Վերջապես, յերեկոյան դեմ, Պինգվիտը յերեաց: Նա գոհ ե և ուրախ և, ըստ յերեութին, ամենկին քաղցած չե:

— Ուտել եմ ուզում, — ասաց Խելգեն նրան:

— Վատ ուտելիք ե, — ասաց Պինգվիտը, ցույց տալով պտուղները:

— Այս, վատն ե... բայց դու չգիտե՞ս, թե մենք ինչ պիտի անենք: Ասա, սիրելի՞ս սիրելի՞... Պինգվիտ:

Փոքրիկ սրիկան իբրև պատասխան միայն ժպտաց և ասաց.

— Հրացանը...:

Բայց Խելգեն նորից կրկնեց. «Վոչ» և Պինգվիտը կրկին շուռ յեկավ ու գնաց:

Այս ժամանակ Յոնասը մեջ ընկավ ու սկսեց Խելգելին հայոցել:

— Հրացանը տուր նրան, — ասաց նա: Զի՞ վոր մենք ուրիշ յելք չունենք: Յեվ, բացի այդ, նրա ոգնության համար պիտի վոր մենք վճարենք նրան: Յեվ չե՞ վոր, միևնույն ե, դու հրացանը գործածել չգիտես, ավելի լավ ե տուր նրան:

— Վոչ, — համառորեն պնդեց Խելգեն:

Պինգվիտն արդեն բավական տարածությամբ հեռացել եր: Յոնասը կարգին զայրացավ:

— Այս, Խելգե, ինչ համառ ավանակ ես, — բացագանչեց նա: Զե՞ վոր քո պատճառով, քո այդ անիծված համառության պատճառով մենք ամբողջ գիշերը պիտի նստենք այստեղ... Յես գրեթե քաղցից մեռնում եմ արդեն...:

Խելգեն ել սկսեց մտածել: Քաղցը հանաք բան չի: Իսկ Պինդվիտն արդեն մոտեցել եր հրվանդանին և շուտով կանհետանար...:

— Պինդվիտ... Պինդվիտ... հանկարծ գոչեց Խելգեն, քանի ուժը պատում եր, ձեռքերը խողովակածե դնելով բերանին: — ՀԵ!, Պինդվիտ... հրացանը... վերցրու հրացանը...:

Պինդվիտը վայրկենապես կանգ առավ, շուռ յեկավ, վազեց գեպի Խելգեն, փաթաթվեց նրա վզով...:

— Հրացանը... հրացանը... կրկնեց նա:

Խելգեննրա ուսից կախեց հրացանը: Պինդվիտը հուզմունքեց գունատվեց: Գրենլանդացի փոքրիկ վորսորդի սիրտը թրթուց: Հրացան, նա հրացան ունի...:

— Դնանք, — առաց նա և առաջ վազեց:

Նոքա հետևեցին նրան: Պինդվիտը մի դուրս ցցված փոքրիկ հրվանդան տարավ նրանց, պտտեց սառցի նեղ լեզերքի շուրջը, վոր գեռ մնացել եր ափի մոտ, և հանկարծ նրանք լսեցին ինչ վոր մի մարդու բարձրածայն ծիծաղ....

Նրանց առաջ կանգնել ելին Արնալուկն ու Երիկը:

Այս ինչ ե նշանակում: Դուք ինչպես ընկաք այստեղ, — բացականչեցին Յոնասն ու Խելգեն:

— Բայց Խելգեն... միթե դու չես ճանաչի Տասսինորկը...

Նոր սիախն Խելգեն ու Յոնասը նկատեցին, վոր իրենց առաջ ընկած եր Տասսինորկը: Նոքա ճանաչեցին գրենլանդացոց խրձիթները, վորոնք այժմ դատարկ ելին, Նորդստրանդի տունը, առետրական ընկերության շենքերը, ածուխի պահեստները, ձկան յուղով ու ճարպով լցված տակառների յերկար շարքերը, արջի մորթիներ չորացնելու տախտակամածը, գրոշակի յերկար ձողը և նրա ծայրին ծածանող ճերմակ ու կարմիր վիմպելը (դրոշակ)....

Այդ ցույց եր տալիս, վոր նոքա հեռուն չեյին մեկնել... ամենենին չելին հասել ամայի կղզին, այլ անցել ելին միայն Տասսինորկ հրվանդանը և հասել եյին նրա մյուս կողմը... Այս, Պինդվիտը, այդ փոքրիկ սրիկան... ինչպես իրենց ձեռք առավ ու իրենք բան չնկատեցին: Պարզ եր, վոր Երիկն ու Արնալուկը

այդ դավադրության մասնակից ելին: Բայց ինչ արած... խորամանկը յուր վարպետությամբ հրացանը ձեռք բերեց, և ինչպես են փայլում նորա գրենլանդական աշիկները...:

Անկասկած, նրա արարքի մասին ձմբան յերկար գիշերկ ներին գրենլանդական խրձիթներում դեռ շատ ժամանակառունենական, յերբ ծովախորշը հաստ սաոցով ծածկված կլինի, խոկ գրսում ուժգին սառնամանիքը կճրճու, և ոտար տղաներն արդեն հեռու կլինեն....

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Այցելություն «Հույսի Հովտին». — Դանիական նավը. — Կապիտան Զոմելի կամաց լրացիր. — Յոնասն ընդունվում ե նավ. — Հրաժեօս մերք. — Մի կապոց լրացիր. — Յոնասն ընդունվում ե նավ. — Հաջող նավակ մեկնում. — Պինդվիտը նանապարհ է գենում նավը. — Հաջող նավակ գրենլանդերեն է սովորում. — Գրենլանդական գեացություն. — Երիկը գրենլանդերեն է սովորում. — Գրենլանդական այբուբենը.

— Դուք չեք կամենում, քանի դեռ նավը Դանիայից չի յեկալ, ինձ հետ այցելել «Հույսի Հովտը» և «մնաս բարով» ավել նրան, — առաջարկեց Նորդստրանդը տղաներին:

Այս, ինարկե, նոքա այդ ուզում են: Յեզ ահա նրանք այս փոքրիկ ուղենորության համար պատրաստվեցին: Նոքա ուղենորվեցին մի մեծ նավակով, վորով սովորաբար գրենլանդացի ճանապարհորդում են, իսկ Յոնասը մնաց Տասսինորկում:

Ինչ հրաշալի ճանապարհորդություն եր: Տղաներն իրենց ձմեռվա բնակավայրը հազիվ ճանաչեցին: Հովիտն այժմ բոլոր լովին այլ տեսք ուներ և նույնիսկ արժանի յեր իր՝ «Հույսի Հովտը» անվանը: Խելգեն անդադար խոսում եր, հիշելով այն ամենը, ինչ վոր նոքա այստեղ ձմեռելիս կրել ելին:

— Ահա այստեղ Երիկը ծովացուլ սպանեց: Նայիր, Արնալուկ, այստեղ եր մեր մոի պահեստը... իսկ այստեղ ընկած եր «Մարսը», յերբ իջավ Գրենլանդիա:

Նորդստրանդը և Տասսինորկից յեկած գրենլանդացիք ուղեղություն լեռները թուշուններ խփելու համար: Բայց Արնալուկը, Երիկի և Խելգեյի հետ մնացին հովտում: Նա կամենում

Եր մանրամասն դիտել այն տեղը, ուր տղաները ձմրան յերկար ամիսներն եյին անցկացրել:

— Ո՞ւր ե ձեր բնակարանը: Յես ուզում եմ տեսնել ձեր խրճիթը ներսի կողմից, — ասաց նա — գնանք այնտեղ:

Նորա խրճիթից յերեք հարյուր սաժեն հեռավորությամբ կանգնած եյին ավում:

Դէ, վազենք — առաջարկեց Արնալուկը; — տեսնենք՝ ով շուտ կհասնի... ՄԵԿ, յերկու, յերեք...:

Նոքա վազեցին: Արալուկն իսկույն նրանցից առաջ ընկավ, թոչնի պես թեթև ու բեկուային նապաստակի պես արագ:

— Ուսուա... յես ձեզամից շուտ հասա, — գոչեց նա Երիկին ու Խելգեյին, և չսպասելով նրանց մտավ ոդապարիկի շուռ տված կողովի մեջ: Մի բոպե հետո նա սողալով, չորեքթաթ դուրս յեկավ այնտեղից, ծիծաղից բռնված: Նրա վոսկեզույն մազերն ալիքների նման փովեցին նրա ուսերի վրա:

— Այ, հիմա գիտեմ, թե զու ուր ես ապրել, Երիկ, — ասաց նա:

— ԶԵ վոր յես ել եմ այնտեղ ապրել, — ավելացրեց վիրափորփած Խելգեն: Նա առաջարկեց նրանց՝ ջրասույզ հավերի (գագար) ձու հավաքելու գնալ և տղեցքը իսկույն համաձայնեցին: Խելգեն անմիջապես վազեց առաջ. այդ ժամանակ Արնալուկը դառնալով Երիկին ասաց.

— Մի նայիր, թե ինչ եմ գտել ձեր խրճիթում:

Նա թանկագին քարով մի մատանի ցույց տվեց, վոր փայլում եր արևի ճառագայթների տակ:

— Ա՛խ, այդ մորս մատանին ե, — բացագանչեց նա:

Այդ մատանին յուր պատմությունն ուներ: Շատ հին մատանի յեր այդ և մայրն այդ մատանին նվիրել եր իր մեծ վորդի Երիկին, յերբ նրա տասնհինգ տարին լրացել եր: «Յերբեք այս մատանին մատիցդ չհանես, սիրելիս, — ասաց նա մատանին տալիս, — թող այն միշտ հիշեցնի քեզ քու մորդ, և մորդ մասին ունեցած միտքն ամեն վատ քալերից քեզ հետու կը պահի»:

Յեվ այդ մատանին Երիկը կորցրել եր: Հավանորեն մատից գուրս եր ընկել, վորովհետև ձմեռը նիհարել եր և մթության մեջ չեր կարողացել գտնել: Այժմ Արնալուկը գտել եր այդ մատանին:

— Մոտդ պահիր, Արնալուկ — ասաց նա զգացված: Այդ մորս տված ամենաթանկ հիշատակն ե: Բայց յես կամենում եմ այն նվիրել քեզ: Դու այստեղ ինձ համար քույր յեղար: Թող այն հիշեցնի քեզ մեր մասին, յերբ մենք Դանիա կգընանք:

Բայց Արնալուկը մատից հանեց նրա տված մատանին և տվեց նրան:

— Երիկ, — ասաց նա — գրենլանդացի աղջիկները մատանի չեն կրում և քեզ ու Խելգեյին հիշելու համար ամենեին մատանու կարիք չկա: ԶԵ վոր մենք յերեքովս ել՝ յես, դու, Խելգեն ընկերներ ենք և միշտ ընկերներ կմանք առանց մեկմեծենքն ալիքների նման փովեցին նրա ուսերի վրա:

Ծովը հանդարտ եր և բյուրեղի նման թափանցիկ: Նրա մեջ լողացող սառցի կտորները գրեթե չելին շարժվում, բայց նավակը նոցա միջով հեշտությամբ սահում եր:

Ինչ գեղեցիկ սառուց ե: Կապուտակ, թափանցիկ, արևի ճառագայթներից կամ ծիածանի գույնով պսպղացող արծաթ կասես լինի:

Երիկը չեր կարող չհշմանդ այս հիանալի տեսարանով:

Տասսինորկն արդեն բոլորովին մոտ եր:

— Ինչ գեղեցիկ ե այս յերկիրը, — ասաց նա Արնալուկին: Յես, հավանորեն, հաճախ պիտի հիշեմ այս հերիաթային գեղեցկությունն ու գույների հիշեղը և միշտ պիտի սլանամ զեղի այստեղ:

Բայց Արնալուկը չեր ել լսում, թե ինչ եր ասում նա: Նրա հայացքը շեշտակի հառած եր գեղ հեռուն և բեկովել եր հազիվ նկատելի մի սե շերտի վրա, վոր յերեսում եր ծովում, Տասսինորկի ժայռերից են կողմը: Նա բռնեց Երիկի ձեռքից գոչեց:

— Նալիք, ենտեղ, նավ... Դանիայից յեկող նավ....

Տասսինորկի համար չափազանց յեռուն ու կենդանի ուրեր սկսվեցին: Գաղութում ամենքը շարժման մեջ ելին: Դանիական նավի գալը բնակիչների կյանքում չափազանց կարևոր մի դեպք եր: Նավը կապ եր պահում նոցա և հեռավոր յերկիրների միջև, կապում եր նրանց քաղաքակրթված յերկիրների հետ և վոչ միան տեղեկություններ եր բերում այնտեղից, այլ և նոցա գոյության համար անհրաժեշտ իրեր ու մթերքներ:

Նավը շտապ պիտի դատարկվեր, և աշխատանքն սկսեց յեռալ ափի վրա: Զարմանալի յեր, թե նավը վորքան բան եր տեղավորել յուր մեջ: Այնտեղ ածուխի, նավթի, փայտեղենի մեծ պաշար կար, նույնպես մեծ քանակությամբ զանազան մթերքներ՝ ալյուր, սուրճ, թեյ, շաքար, յուղ, քիշմիշ և ուրիշ շատ բաներ:

Կային նաև արդ ու զարդի ապրանքներ՝ մահուղ, քաթան, թել, ժապավեն, ասեղ, դանակ, զանազան գործիքներ, նույնպես զենք ու փոսքուշտ. մի խոսքով, ինչ փոր հարկավոր եր Տասսինորկին հանգիստ ապրելու համար, մինչև գալ տարի՝ հաջորդ նավի գալուստը, ամեն բան կար:

Այդ որերում աշխուցքը մեծանում է և կյանքը բեկուային այդ գյուղում աղքյուրի պես խփում ե:

Յերբ նավից ամրող բեռը դուրս բերին, հանեցին նաև նոր տարու առթիվ նվերներով լցված արկղը, փոր ուզել եր նորդստրանդը գաղութի համար, այն ժամանակ սկսեցին նավի: մեջ տեղավորել այն ապրանքները, փոր սթերված ելին Դանիա ուղարկելու համար: Այնտեղ կային կետի և ծովացութի ճարպով լցված տակառներ, արջի սորթիներ և բեկուային ուրիշ կենդանիների մորթիներ: Գրենլանդացիք գիշեր-ցերեկ նավը շըջապատել ելին, — չե փոր գիշերներն այնտեղ յերեկի նման լույս եր, — իսկ նավաստիներն որվա աշխատանքից հետո հյուր ելին գսում նոցա, այցելելով իրենց ծանոթներին:

Նորդստրանդը գրեթե նավից ցած չեր իջնում: Յուրաքանչյուր տարի ընդամենը մի քանի որ, իսկ յերբեմն ել յեր-

կու տարին մի անգամ, նա հսարավորություն ունի խոսելու քաղաքակրթված յեկրոպացիների հետ: Նա նրանցից եր իմանում, թե աշխարհում, իր հայրենիքում և հեռավոր յերկիրներում ինչ ե կատարվում... և շատ բնական ե, վոր նա մի բոպե անգամ չի ցանկանում կորցնել և մինչև վերջին ըոպեն յեկորներից չի անջատվում:

Իսկ այս տարի, բացի այդ, երիկի ու Խելգեյի հայրենիք վերագանձնալու ինդիքն ել պիտի կարգադրի:

Նավի կապիտան Զոմմերը Նորդստրանդի նախկին ծանոթն եր և այդ պատճառով նոքա շատ մտերմաբար դիմավորեցին միմյանց: Նա ուղղակի չեր հավատում յուր ականջներին, յերբ նորդստրանդը պատմում եր նրան զարմանալի արկածներ այն տղաների, փոր ողապարիկով Գրենլանդիա ելին թոռի:

— Վորքան հիշում եմ, — ասաց նա նորդստրանդին, — գիտականորեն ապացուցված եր, թե «Մարս» անպայման պիտի ընկած լինի Ատլանտյան ովկիանոսը... Նաւեցեք, թե ինչ եր գրված այդ մասին թերթերում...:

Յեվ նա արդեն պատասխանակի մեծ կապոցը քանդելու: Այնտեղ կարգով հավաքված ելին ամբողջ տարվան համարները և նա ուզում եր գտնել նկարագրությունն այն բանի, փոր տեղի յեր ունեցել գրեթե յերեք քառորդ տարի առաջ:

— Վո՞չ, վո՞չ, — առարկեց նա, — համարները մի խառնեք: Զե՞ փոր զիտեք, փոր յես որեկան մի համար եմ կարգում: Իսկ այդ կապոցում դրված են ամբողջ տարվա համարները: Յես հերթով կհասնեմ իս բարեկամների թոփչքի նկարագրության: Հավանորեն, այդ կինի նոր տարվա մոտերքը:

— Լավ, լավ... Ինչպես դուք հարմար կպտնեք... բայց յես այդքան համբերել չելի կարող, — ասաց կապիտան Զոմմերը:

— Այստեղ դուք այդ կսովորեք, — նկատեց Նորդստրանդը, — մենք ստիպված ենք այդպես անել: Ամեն մի որվա հազը, — մենք ստիպված ենք այդպես անել: Ամեն մի որվա կարգալու նյութի պիտի ունենալ: Հակառակ զեպքում, այս մարդ կարգալու նյութի պիտի ունենալ: Հակառակ զեպքում, այս մարդ կարգալու նյութի պիտի ունենալ: Առանց այն ել այստեղ բավական դժվար ե դիմանալ:

— Սակայն դուք չեք բթացել, Նորդստրանդ:

— Յեթե այդ չի պատահել, նրանից ե, վոր յես միջոցներ եմ ձեռք առել դրա դեմ: Զե՞ վոր յես իմ հոգաբ ցանկությամբ յեկա և մնացի այստեղ: Բացի այդ, յես մենակ չը-մնացի, ինձ հետ եր Արնալուկը:

— Ախ հա, ձեր աղջիկ Յելենան... Նա միշտ ամենից առաջ եր նավ գալիս, բայց այս անգամ նրան դեռ չեմ տեսել:

— Նո հիմա տղաների և Յոնասի հետ այստեղ կգա:

— Յոնաս: Այդ ո՞վ ե: — Հարցը եց կապիտանը:

— Ախ ճիշտ, յես դեռ չեմ պատմել ձեզ նրա մասին: Դե, ուրեմն լսեցեք: — Յեկ Նորդստրանդը մանրամասն պատմեց կապիտանին Յոնասի պատմությունը և այն, թե ինչ իրարանցում առաջացրեց շոտլանդական կետորսական նավի՝ Տասսինորկ գալը և հարբած նավաստիների ալցելությունը:

— Հա, հա, — մտազբաղ պատասխանեց կապիտանը: Այդ կետորսները հաճախ շատ ապօրինի բաներ են անում: Սովորաբար ձկնորսական նավի վրա ամեն տեսակի թափթփուկներ են հավաքվում: Վայ այն յերիտասարդին, վոր կընկնի դրանց մեջ: Խեղճ, խեղճ Յոնաս:

— Յեկ ի՞նչ, նա կամենում ե վերադառնալ հայրենիք: — Հարցը նա սի ըռպէ հետո:

— Այո, նա միայն այդ մասին ե յերազում, — պատասխանեց Նորդստրանդը:

— Գիտեք ինչ, Նորդստրանդ, յես նրան կվարձեմ և հառաջիկա գնացքիս խմբում կտեղավորեմ: Համենայն դեպս, նա դատարկաձեռն տուն չի վերադառնա:

Նորդստրանդն ուրախացավ և բարի կապիտանին շնորհակալություն հայտնեց: Այսպիսով Յոնասի բախտը լավ կտրեց: Բայց դեռևս ինչ վոր մի բան ծանրանում եր Նորդստրանդի սրտի վրա և նա ուզում եր կապիտանի հետ վորևե խնդրի մասին խոսել, նախքան տղաների, Յոնասի և Արնալուկի նավ գալը:

— Ահա թե ինչ գործ ունենք, իմ ընկեր, — ասաց նա կապիտան Զոմերին: Անշուշտ ողաչումների վողջ և առողջ, ան-գնաս տեղ համանելն ուժեղ տպավորություն կդորձի: Զե՞ վոր

նրանց արկածը մի աղմուկ ե հանել և բոլորը նրանց կորած են համարել: Յեթե իմանան նրանց վերադարձը, նավին դիմավորելու կզան լրազրական թղթակիցները: Միան ամերիկացիք պատրաստ կլինեն միլիոնափոր գոլարներ վճարել իրենց թերթերում այդ մասին առաջին տեղեկությունը տպելու իրավունքի համար: Արգավիսով մեր տղաները կդառնան որվանակունքը...: Նոցա մասին ամենքը կխոսեն ու նրանց յերեած հերոսները...: Նոցա մասին առաջին տեղեկությունը տպելու կթողնի: Բայց այդ կտեի կարճ ժամանակ միայն և կրկին նրանց կմոռանան: Սակայն նոցա վնաս հասած կլինի արդեն, վոր հետո ուղղելը դժվար կդառնա... նոհասած մեջ կարող ե սնափառություն զարթնել գուցե նաև սնացած կարող ե սնափառությունը: Այդ բանից կտուժի նոցա բնափորությունները կարող են դեպի վատ կողմ թերթել: Յեկ ահա յես ինդրում եմ նրանց ձեր նավի վրա լինելու հանգամանքը խիստ գաղտնի պահել: Թող վոչ վոք չիմանա, թե ձեզ հետ յեկողներն ինչ տղաներ են, մինչև իրենց հայրական տուն հասնելը: Յես մի նամակ եմ գրել, վոր ինդրում եմ նավը հասնելուն պես կոնսուլ Խոլմին հանձնեք: Խոստանում ե՞ք այդ անել կապիտան Զոմերը:

— Խոստանում եմ, — զգացված ասաց կապիտանը և սեղմեց յուր ընկերոջ ձեռքը:

Հենց այդ ըռպելին սենյակի դուռը ծեծեցին: Արնալուկն եր դա:

Հասավ վերջին որը, մեկնելու որը...

Մնաս բարել, սակայն, այնքան ել ծանր չթվաց, վորով-հետև Նորդստրանդը խոստացավ գալ տարի անպայման Դանիա նշանակում եր, վոր նոքա մի տարով ելին միայն ան-գնալ: Նշանակում եր, վոր նոքա մի տարով ելին միայն ան-ջատվում: Յեկ յերիտասարդ ընկերներն աշխատում ելին այս մտքով միխթարել իրենց:

Տղաների իրերն արդեն նավ ելին տարված: Այստեղ դարս-ված ելին նաև ոդապարիկի մնացորդները, գործիքներն ու նոր-յեղբոր պայուսակը: Յոնասը վաղուց արդեն նավի վրա գործի յեր անցել: Նորա նոր ընկերները, դանիացի նավաստիները, շատ մտերմաբար ելին վարվում նրա հետ:

Նավս արդեն մեկնելու համար պատրաստ եր և սպասում  
եր միայն յուր վերջին ճամբորդին—երիկին ու Խելգեյին:

— Մնաք բարով,—ասաց Խելգեն, — Մնաք բարով, պա-  
րսն նորդստրանդ և դու, Արնալուկ... մնաս բարով, Տոնդիդու-  
արկա... Մնաք բարով բոլորդ և ...

Նա այլևս խոսել չկարողացավ և նրա աչքերից արտա-  
սուքները ցայտեցին...:

— Լաց մի լինիր, սիրելիս, լաց մի լինիր,—ասաց Նորդ-  
ստրանդը—մենք յեկող տարի նորից կտեսնվենք:

Երիկն ել շատ հուզված եր, բայց ինչպես մեծ տղա, աշ-  
խատում եր իրեն զսպել, թեև նրա աչքերում ել արտասուք-  
ներ յերկացին: Նա այնպես ուզում եր ասել այն բոլորը, ինչ  
վոր կար սրտում, շնորհակալություն հայտնել նորդստրանդին  
ամեն բանի համար, ամեն բանի... Բայց վոչ մի բառ արտա-  
սանել չկարողացավ, վախեցավ չինի թե Խելգեյի պես հեկեկա:

— Յերթանք դեպի նավակը,—ասաց Նորդստրանդը, այն-  
տեղ վերջնական հրաժեշտ կտանք:

Նոքա տանից գուրս յեկան և ուղևորվեցին դեպի ափը:

— Յերբեք, յերբեք յես չեմ մոռանա Տասսինորկը... դող-  
դոջուն ձայնով ասաց Երիկը:

— Իսկ մի տարի հետո մենք կտեսնվենք Դանիայում, —  
ասաց Արնալուկը:

— Մենք նոր տարին միասին կդիմավորենք, այս, ճիշտ-  
ե, չե՞:

Արնալուկը պինդ սեղմեց նրա ձեռքը և արագ վազեց դե-  
պի ժայռը:

Ահա նա ժայռի գագաթը բարձրացած, աչքերը ձեռքով  
արեից պաշտպանած՝ դիտում ե մեկնողներին:

Նորդստրանդը վերջին անգամ Երիկին գրկեց և ասաց.

— Իս թանկագին տղա, մի մոռանար այն, ինչ սովորե-  
ցիր այստեղ ձմեռը: Գալ տարի մենք կոպենհավենում կտես-  
նըլինք: Յես կամենում եմ, վոր այն ժամանակ ցույց տաս ինձ  
ողբեկալի ավարտական վկայականդ: Լսուս ես Երիկ: Խոս-  
ուացիր ինձ այդ:

— Յես խոստանում եմ բոլոր ջանքերս թափել դրա հա-  
մար: Պատասխանեց Երիկը և նրա աչքերը փայլեցին:

— Հիշիր, Երիկ, վոր վորոշված նպատակին անպայման  
պիտի հասնել: Պետք և սովորել՝ բաշաբար կովել և հաղթել  
պոլոր արգելքները: Ով այդ չկարողանա կյանքում անել, նա  
ըոլոր միշտ կարութիւն: Դե հիմա մնաս բարկ, Երիկ... Մնաս բարկ  
Խելգե, մինչև յեկող տարի:

Նորդստրանդը շուռ յեկավկ արագ բարձրացավ սարը, ուր  
կանգնած եր Արնալուկը: Նրա աչքերը թաց եյին, բայց գուցե  
մենակը յերկար ժամանակ թափահարում եյին ձեռքները՝ մեկնողներին:

Ժայռի վրա կանգնած Արնալուկը սեղմվեց հորը և նոքա  
յերկար ժամանակ թափահարում եյին ձեռքները՝ մեկնողներին:

Նավս արդեն խարիսխը դուրս եր քաշել: Կապիտան Զոմ-  
մերը սիրալիր վողջունեց իր յերիտասարդ նավորդներին, վո-  
րոնք կանգնել ելին տախտակամածի վրա և աչքից չեյին հե-  
ռացնում Տասսինորկը:

Հանկարծ հրացանի պայման լսվեց:

Նավի վրա գտնվողները թափվեցին դուրս և նավից մի  
քանի սաժեն հեռավորությամբ մի մակույկ տեսան: Այստեղ  
նստած եր Պենգվիտը և բոնել եր ձեռքին ծովս արձակող հը-  
րացանը: Նա իր մեծ, լայն բերանը բացած ծիծաղում եր և  
նրա սպիտակ ատամները պսպղում ելին:

Երիկն ու Խելգեն զիխարկները շարժելով բարեկեցին նրան:

— Մնաս բարով, Պինդվիտ, մնաս բարով, մնաս բարով...  
գոշեցին նրանք:

Նավը շոգու ամբողջ ուժով առաջանում եր և շուտով  
Պինդվիտն ալիքների վրա յերկում եր յերերվող մի փոքրիկ,  
սկ կետի պես: Տասսինորկն ել հետզհետե ձուլվեց ափին և այն  
դոկելը հիմա շատ դժվար եր: Նորդստրանդի տան յետեկի ժայ-  
ջոկելը հիմա շատ դժվար եր: Նորդստրանդի տան յետեկի ժայ-  
ջոկելը հիմա կատարի առաջնորդ է նրա կատարին դեռ ևս ինչ վոր բան  
ու դեռ ևս յերկում եր և նրա կատարին դեռ ևս ինչ վոր բան  
եր ծածանվում: Արնալուկի կապույտ շարֆն եր այդ, վոր նա փը-  
ռեկ եր քամու առաջ: Այդ յուր ընկերներին ուղղած վերջին  
վողջունն եր:

— Մնաս բարով, Տասսինորկ... Մնաս բարով, յերկրորդ հայրենիք....

Սուետական ընկերության նավն այդ տարի հոկտեմբերին պիտի համներ Դանիա: Ճանապարհին կապիտանը մի շարք տեղեր պիտի այցելեր, պիտի անցներ Գրենլանդիայի և Յակոբս հաֆենի մի քանի գյուղերը և արևմտյան ափին տասնչորս որ պիտի կանգներ: Ծովը հանգիստ եր ու նավը վատանգների չեր պատահում, թեև սառուցները չորս կողմը լողում ելին և նապատահում, թեև սառուցները չորս կողմը լողում ելին Յերբեմն շփում եր յուր շուրջը լողացող սառցասարերին: Վաղպիսի մի հսկա սառցասարի վրա, վոր փայլվում եր և ծիածանի բոլոր գույներն անդրադարձնում, տղաները սպիտակ արջերի մի ամբողջ ընտանիք տեսան:

— Նոքա ճանապարհորդում են, ծիծաղեց Խելգեն:

Բեեռային բնության խոր լուսությունը խանգարվում եր միայն շոգեմեքենայի շխչիսկոցով: Նավը տարութերումների շենթարկվեց և այդ պատճառով ծովալին հիվանդությամբ վոչ վոր շտառապեց:

— Սպասեցեք, մինչև մենք հրաժեշտ տանք Գրենլանդիայի ափերին և մտնենք Ատլանտյան ովկիանոսի ջրերը, ասաց կապիտանն իր յերիտասարդ ուղևորներին, այն ժամանակ տեսնենք ինչ կասեք:

Սակայն Երիկը նավի վրա ժամանակը չկորցրեց: Նա կապիտանի սենյակում շատ զբեր գտավ, վորոնք նրան հետապիտանի սենյակում շատ զբեր գտավ, վորոնք նրան հիշեց քըրքըցին և նա նրանցից չբաժնվեց: Բացի այդ, նա հիշեց Նորդստրանդին տված խոստումը և ուրախությամբ ընդունեց կապիտանի առաջարկը, յուր հետ մատեմատիկա պարապելու մասին:

Խելոք և սիրալիր պատանին չտիպազնց գյուր յեկավ Զոմմերին և նա հայտնեց նրան, վոր յուր գիտության պաշարից սիրով բաժին կհանի նրան:

Կապիտանն աստղաբաշխության, մատեմատիկայի, աշխարհության և պատմության գրեթե ուներ և ամեն որ մեկ հագրության և պատմության գրեթե ուներ և ամեն որ մեկ յերկու ժամ Երիկի հետ պարապում եր: Նրա հաջողությունները Զոմմերին հափշտակեցին:

— Կեցես Նորդստրանդ, մատածում եր Զոմմերը՝ գիտելով

Երիկին, ինչ լավ ե սովորեցրել, նայիր, տղան ամբողջ մի տարի գիմնազիա չհաճախելով, վոչ միայն վորեւ բան չի կորցրել, այլև ձմեռը Տասսինորկում անցկացնելով՝ մի բան ել ավելի յե շահել: Նրա գիտությունն ընդարձակվել է:

Ցեվ այդ ճիշտ եր. Երիկը կարող եր հանգիստ նայել լուր ապագային: Նա քննություն կարող եր տալ: Նորդստրանդն ու ծնողները ինչ կուրախանան....

Նավի հասարակության մեջ, բացի կապիտանի ողնականներից, ծովալին սպաներից, գանգում ելին Դանիական գաղութի կառավարիչ Ուսենը և մի սեմինարիստ, վոր վերադառնում եր Դանիա: Յակոբսհաֆենում նրանց միացավ նաև մի ֆրանսիացի յերիտասարդ գիտնական ուղևոր, վորն ուսումնակիրել եր արևմտյան Գրենլանդիայի բուսականությունը և այժմ կողենհագենի վրայով վերադառնում եր Փարիզ:

Նրա ազգանունը Դյուբոկ եր և Երիկն այս առթիվ հիշեց, վոր արդպես եր կոչվում Նապոլեոնի զորավարներից մեկը:

Դյուբոկը դանիերեն գիտեր և Երիկը յերկար զրուցներ սկսեց նրա հետ՝ Ֆրանսիական պատմության՝ առանձնապես Նապոլեոն Լի և նրա ժամանակաշրջանի մասին: Իսկ սեմինարիում Ելի և նրա ժամանակաշրջանի մասին Երիկին գրենլանդական լեզվի դասեր տվեց և Երիկն այնպիսի արագ հառաջաղիմություն ցույց տվեց, վոր Դյուբոկը նրան նախանձեց և ինքն ել ուզեց սեմինարիստից սովորել այդ լեզուն:

— Շատ բարի, պատասխանեց սեմինարիստը, ահա մենք գրենլանդերեն այբբենարան ունենք: Կարծում եք, վոր կկարողանար հաղթահարել: Թե ձեզ համար այդ դժվար կլինի:

— Դուք ծիծաղում եք ինձ վրա, ասաց Դյուբոկը:

— Ամենեին: Ահա ձեզ որինակ: Գուցե գիտեք արդեն, վոր գրենլանդական մի բառն ամբողջ մի նախադասություն եարտահայտում: Այժմ գուք կկարող մի հասարակի, փոքրիկ բառ, վորով սկսվում ե փոքրահասակ յերեխաների այբբենարանը և վորը նշանակում ե՝ «Այս բոլորը վարժություններ են, սխալներ չանելու համար»: Մենք մեր առաջին դասը հենց սխանով կսկսենք, վոր կուսումնասիրենք այս մեկ բառը: Նրանով կսկսենք, վոր կուսումնասիրենք այս մեկ բառը:

— Քայց լսեցեք, սիրելի ուսուցիչ, բացադանչեց բարկացած ֆրանսիացին:

— Սպասեցեք. նայեցեք նախ այս բառի վրա: Ահա այստեղ ե գրված: Խնդրեմ կապելով կարդաք.

„tamassakukussarpatdlartokarnaverutigssiangaluit».

— Խորապես շնորհակալ եմ, բացադանչեց Դյուբոկը: Այդ բավական ե: Այս այբբենարանը մարդ կգժվացնի, ավելի լավ ե մի ուրիշ բանի մասին խոսենք:

Այսպիսով դասը վերջացավ:

Հոկտեմբերի մոայլ որերից մեկում, յերբ նավագնացությունն արդեն իր վախճանին եր մոտենում, հեռվում, ծովի մուգ կապտագույն ալիքների վրա, հորիզոնում ինչ վոր մութ ատամնավոր ակոս յերևաց:

— Այդ մեր հին նորվեգիան ե, ասաց կապիտանը ցույց տալով ակոսը:

Խելգեն իսկույն մտածեց Յոնասի մասին:

— Յոնաս, Յոնաս,—գոչեց նա վազելով նավաստիների բաժանմունքը,—Յոնաս, նորվեգիան յերեսում ե:

Յոնասը վազեց դեպի տախտակամածը:

Հաջորդ որը նավը Խրիստիանզանդ մտավ և խարիսխ ձգեց:

Կապիտան Զոմմերն իր հետ վերցրեց Յոնասին: Նա ուզում եր անձամբ առաջնորդել նրան դեպի յուր հայրական տունը: Դյուբոկն ել ափ ուղերձվեց: Նա ուզում եր առիթն ոդագործել և ինչ վոր հեռագիր ուղարկել:

—

—

## ԳԼՈՒԽ ՏԱՄԵՐՈՐԴ

Գերագարա գեպի օռն



Նկար 8.

— Պարոն կոնսուլ Խոլմ... Ձեզ անձնական... հեռագիր... Հաշվապահ Մատուենն իր տեսչին տվեց հեռագիրն այն մոմենտին, յերբ նա պատրաստվում եր զրամենյակից գնալ:

Կոնսուլ Խոլմը հեռագիրը գրեց զրապահը: Նա պատրաստվեց հեռագիրը տան ձանապարհին, ելեքտրաքարշում կարդալու....

Նա միշտ աշխատում եր ծառայությունից հետո շուտով տուն վերադառնալ: Այն ոչվանից, յերբ նրա վորդիները վորում կինը քիչ եր մնում՝ վշտից մեռներ, նա աշխաշնչացան, և կինը քիչ եր մնում՝ վշտից մեռներ, նա աշխատում եր, վորքան կարելի յե, մենակ չթողնել նրան: Նրան շատ եր վրդովում այն, վոր մարդը շարունակ խոսում եր, թե յուր վորդիները կենդանի չեն, նրանց մահվան չեր հավատում: Նա սպասում եր, վոր վորդիները կվերադառնան, և այդ բանը վախեցնում եր կոնսուլին. Նա յերկուուր եր կրում՝ չինի՞ թե վախեցնում եր կոնսուլին. Նա յերկուուր եր կրում՝ չինի՞ թե վախեցնում եր կենդանի չեն: Բայց յերբ տանը վորեե բան հիշեցնում եր վորդիներին, նրա սիրաը ցավից ճմլվում եր: Նա յուր վորդիներին չեր կարողանում մոռանալ, բայց աշխատում եր, վոր կինն այդ չնկատի: «Իմ սիրելի Խրիստուան, ինչպես ճերմակել ես», — ասում եր կինը՝ քնքշորեն շոյելով նրա գլուխը:

— Յես զիտեմ... տխուր մտքերը... վշտերը... դու չես հավատում, վոր յերեխաները կարող են վերադառնալ: Իսկ համեմայն դեպս, հույս չեմ կորցնում... հրաշքներ պատհում են:

— Այն, միայն հրաշքը կարող ե յետ բերել նրանց, — մասլված մտածում եր Խոլմը: — Այդ զարհուրելի դեպքերից հետո անցել ե արդեն տասներեք ամիս... և վոչ մի տեղեկություն չի ստացվել «Մարսի» մասին, վոչ մի հեռագիր:

Հանկարծ հիշեց, վոր գրպանում հեռագիր կա, վորը գրասենյակում իրեն եր տվել հաշվապահը, նա բոլորվին մոռացել եր այդ....

— Խրիստիանզանդիցն ե, — շշնջաց նա, հեռագիրը քանալով:

Բայց ինչ կարող եր լինել:

— Ինչու այդպես դժգունեցիր, — հուզմունքով հարցրեց նրա կինը:

— Դու անախորժ լուր ես ստացել:

Իսկապես, նա չափազանց սպրդնած եր, և նրա շքթունքը ները դողում ելին: Նա ուզում եր ինչ վոր բան ասել կնոջը, բայց հուզմունքից վոչ մի բառ չկարողացավ արտասանել.... Արցունքները ցայտում ելին նրա աչքերից:

Բայց ուրախության արցունքներ ելին դրանք:

— Կարդա, — ասաց նա կնոջը, մեկնելով հեռագիրը նրան:

Տառերը նրա աչքի առջելից թուչում ելին: Հեռագիրը հետեւալ բովանդակությունն ուներ.

«Կոնսուլ Խրիստիան Խոլմին: Կոպենհագեն: Ներքե ստորագրող Գրենլանդական «Հանս - Եգեղե» առևտրական նավի կապիտանը, Գրենլանդիակից վերաբառնալիս՝ հաղորդում ենք մեծ, ուրախալի լուր, վոր վերաբերում ե Զեր լերկու վորդիներին: Մնացալ տարի սեպտեմբերի քսաննեղին «Մարսը» իջել ե Գրենլանդիա, Տասսինորկից տասը մղոն հյուսիս: Զեր լերկու տղաները՝ երիկն ու Խելգեն ձմեռել են գաղութի կառավարիչ Նորդսարանդի մոտ, և հոկտեմբերի քսաննեղին այս նավով կհասնեն Կոպենհագեն: Կապիտան Զոմմեր:

— Այսոր քսաննեղն ե, — նոքա այսոր գալիս են... գուցե հենց հիմա... բացագանչեց մայրը....

Յեզիսկապես, դռան առաջ կանգ առավ ավտոմոբիլը:

Այն, երիկն ու Խելգեն ելին դրանք....: Մըրիկի արագությամբ նոքա սանդուխքներով վազեցին ու նետվեցին ձնողների գիրկը: Իսկ յերեկոյան, մեկ տարվա բացակայությունից հետո, յերբ երիկը պառկեց մահճակալում, յուր նախ-

կին սենյակում, ուր ամեն բան անձեռնմխելի յեր մնացել, ինչպես այս որը, յերբ նոքա հրապարակ ելին գնացել «Մարտունի» թոփչքը գիտելու, նա կրկին յերազներով հեռուս ոլացավ....

Նա յուր առաջ աեսնում եր բեկուային անապատը, Հույսի հովիտը, ծովացուկերի վորսը, սառցասարերը, հյուսիսափայլը, գույների զարմանալի յերանգները և բեկուային բնության վսեմ գեղեցկությունը: Նա կրկին վերապրեց հուսահատությունից գեպի հույսն անցնելու ուրախ զգացումները, իր ազատությունը և նոր տարվան ուրախ տոնը հեռագոր հյուսիսում:

— Յերբեք, յերբեք յես չեմ մոռանա Տասսինորկը... մընջում եր նա, նիրհելով:



պատի ու մենական առ մաս ու հայութիւն ու զ  
ու Աղաք այս բարութիւնը այս այլ սահման ու մաս  
առանձ խափառութիւնը ու արդիւ ու այլն ու է

այս ապարանի պահանձնի ու նույն առ մաս ու մաս  
ապարանը պահանձնուած ցուցի պահանձնի պահանձնի  
առ մաս ապարանը պահանձնուած պահանձնի պահանձնի  
ապարանը պահանձնուած առ մաս ապարանը պահանձնի պահանձնի  
ու պահանձնուած պահանձնի պահանձնի պահանձնի պահանձնի

ապարանը պահանձնուած պահանձնի պահանձնի պահանձնի

ապարանը պահանձնուած պահանձնի պահանձնի


«ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻՑ» ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Գաբրիելյան Ռ. — Միջառակեր բույսեր . . . . . 20 կ.
  2. Լեքեղեվ Խ. Կ. — Խնձորես և առաջացել չերկերը . . . . . 30 »
  3. Գաբրիելյան Ռ. — Ավկիանի թագավորը . . . . . 15 »
  5. Ելաչիչ Յեզ. — Կհնդանական և բուսական աշխարհների փոխարարերության մասին 25 »
  6. Սարգսյան Կ. — Զարմանալի դենքեր . . . . . 35 »
  7. Գաբրիելյան Ռ. — Ճագարամուկը,  
բղեղների յետեից . . . . . 25 »
  8. Սարգսյան Կ. — Կհնդանի ճրագներ . . . . . 25 »
  9. Կանոնական Ֆրիցիոֆ. — Գիշերվա խավարի և սառուցցների  
մեջ 1 հա. . . . . 60 »
  10. . . . . — Մողեսների աշխարհում . . . . . 25 »
- 

ՀՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ ՆՈՒՅՆ ՍԵՐԻԱՅԻ

4. Կարինցեվ . . . . . — Ելեքտրիֆիկացիայի պիոններ Եղիսոնը
11. Կանոնական Ք. — Գիշերվա և խավարի սառուցցների  
մեջ հա. բ
12. Կարինցեվ . . . . . — Դեպի անհայտ հեռուսներ
14. Կեչայեվ . . . . . — Մտորերկրտա ուժեր

Դիմել Պետրատի բոլոր գրախանութերին  
յել բաժանմունքներին





21877